

- Հայ փախստականներին աջակցող լիգա
- Հայաստանի սահմանադրական իրավապաշտպան կենտրոն

Հայաստանում զինժառայության զորակոչվելու և
բանակում ծառայելու առնչությամբ
փախստականների իրավունքների իրականացման
մոնիտորինգ

Հաշվետվություն

| | |
|--|-----------|
| Մոնիտորինգի մասին | 3 |
| Տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում բնակվող փախստականների վերաբերյալ | 4 |
| Ներածություն | 6 |
| Մոնիտորինգի մեթոդները | 9 |
| Գլուխ I. Խնդրի ներկայացումը | 10 |
| Գլուխ II. Մոնիտորինգի անցկացում | 12 |
| Ա. Օրենսդրության վերլուծություն | 12 |
| Բ. Ջրույցների և հարցումների վերլուծություն | 15 |
| Հարցումներ | 15 |
| Ջրույցներ համապատասխան պաշտոնական կառույցների հետ. պաշտոնատար անձանց դիրքորոշումները | 23 |
| ա) Ջինվորական դատախազություն | 23 |
| բ) ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչություն | 27 |
| գ) ՀՀ պաշտպանության նախարարություն | 29 |
| դ) Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ | 31 |
| ե) ՀՀ Նախագահին առընթեր Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողով | 32 |
| զ) Ջինկոմիսարիատներ | 33 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 37 |

Հայաստանի Հանրապետության Ջինված Ուժերում փախստականների ծառայության անցնելու պրոբլեմը գրեթե առաջին օրվանից խիստ էր դրված: Միննույն ժամանակ, եթե սկզբում այդ հարցը հիմնականում բարոյագիտական բնույթ ուներ, ապա վերջին տարիներին, 1999 թ. «Փախստականների մասին օրենքի» ընդունումից հետո, այն փոխադրվեց օրենսդրական հարթություն:

Ինչպես օրենքի ընդունումից առաջ, երբ զորակոչը զանգվածային բնույթ էր կրում, հաճախ ուղեկցվելով փախստականների հետապնդմամբ և նրանց նկատմամբ ուժային մեթոդների կիրառմամբ, այնպես էլ օրենքի ընդունումից հետո, երբ զորակոչը պաշտոնապես տեղափոխվեց կամավորության հարթություն, և օրինախախտումները զգալի նվազեցին, փախստականների կողմից շարունակվում է նշված ոլորտի լարվածության մասին վկայող տեղեկատվական հոսքը:

Մենք որոշեցինք ստուգել խախտումները փաստերով: Փախստականների՝ բանակ զորակոչվելու և այնտեղ ծառայելու իրավունքի պաշտպանության լույսի ներքո ներկայացնում ենք սույն զեկույցը, որն առաջինն է Հայաստանում:

Ջեկույցում անցկացված մոնիտորինգի վերլուծության հետ մեկտեղ մենք տրամադրում ենք նշված ոլորտում Հայաստանում գոյություն ունեցող օրենսդրական դաշտի մասին տեղեկություններ, փախստականների, համապատասխան անձանց հետ հարցազրույցների հատվածներ, որոնք ավելի ցայտուն կներկայացնեն տվյալ խնդրին անռնչվող իրավիճակը:

«Հայ փախստականներին աջակցող լիգան» և «Հայաստանի Սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը» շնորհակալություն են հայտնում նշված մոնիտորինգի անցկացմանը ցուցաբերված օժանդակության համար հետևյալ կազմակերպություններին՝

- ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին
- ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ-ին
- Մարդու իրավունքների պաշտպանության Հելսինկյան հիմնադրամին, Վարշավա
- Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակին
- ՀՀ Ջինվորական դատախազությանը
- ՀՀ Պաշտպանության նախարարությանը
- ՀՀ Կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչությանը
- ՀՀ Նախագահին առընթեր Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովին

Ծրագրի բոլոր մասնակիցները, որոնք ներկայացնում են երկու կազմակերպությունները, մոնիտորինգում դրսևորեցին բարձր աշխատանքային պատասխանատվություն՝ առաջնորդվելով այն նպատակով, որ մարդու իրավունքները դառնան հասարակության նորմ և նրանց պահպանումը նպաստի Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության զարգացմանը:

Նինա Բաղդասարյան
Ծրագրի կոորդինատոր

Տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում բնակվող

Ֆախստականների վերաբերյալ

Հայաստանում փախստականների հիմնական հատվածը հայկական էթնոսի մի մասն է, որը նախկինում բնակվում էր հարևան Ադրբեջանի Հանրապետության տարածքում և որը բռնի տեղահանվել է այնտեղից 1988-92 թթ.՝ Ղարաբաղյան հակամարտության հետ կապված: Բռնի տեղահանված կես միլիոնից ավելի հայեր ապաստան գտան Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում, իսկ նրանցից 360 հազարի համար այդ երկիրը դարձավ հայերի պատմական հայրենիքը՝ Հայաստանը:

Փախստականների գալուստը Հայաստանում ճակատագրական ձևով համընկավ հանրապետության համար ամենադժվարին տարիներին՝ ավերիչ երկրաշարժ, ԽՍՀՄ փլուզում և հանրային համակարգի ձևափոխում, տնտեսական և էներգետիկ ճգնաժամ, գործազրկություն, ընչազրկություն և այլն: Բնակչության առավել խոցելի շերտն այդ ճակատագրական իրավիճակում, չնայած միջազգային կազմակերպությունների և պետական մարմինների ջանքերին, այնուամենայնիվ դարձան փախստականները, որոնք զրկված էին կյանքի սոցիալ-տնտեսական տարրական պայմաններից:

Ադրբեջանից տեղահանված փախստականների նկատմամբ Հայաստանի Կառավարությունը հռչակեց ինտեգրման և նատուրալիզացման քաղաքականություն: Դա կապված է նրա հետ, որ նույնիկ Ղարաբաղյան ճգնաժամի կարգավորումից հետո էլ փախստականների վերադարձը նախկին բնակավայրեր իրատեսական չէր:

Սակայն հրատապ նատուրալացման քաղաքականության իրականացմանը խոչընդոտում էին կոնկրետ հարցեր, կապված Հայաստանում փախստականների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման դանդաղ տեմպերի հետ: Ներկա իրավիճակում, իրենց համար առավել ընդունելի պայմաններ փնտրելու ակնկալիքով Հայաստանը ժամանակավոր կամ մշտապես լքել են ավելի քան հարյուր հազար Ադրբեջանից տեղահանված փախստականներ:

Փախստականների ինտեգրման ու նատուրալիզացման կուրս վերցնելով՝ ՀՀ Կառավարությունը օրենսդրորեն որոշում ընդունեց Ադրբեջանից տեղահանված փախստականներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու ընթացակարգի պարզեցման մասին: Ներկայումս ՀՀ քաղաքացիություն են ընդունել ավելի քան քառասուն հազար փախստական: Գյուղական բնակավայրերում բնակեցված փախստականները տեղի քաղաքացիական բնակչությանը հավասար ստացել են սեփական հող և անասուններ:

Փախստականների պրոբլեմների հանգուցալուծման պետական մեխանիզմներն իրականացնում է **ՀՀ Կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը**:

1993թ. փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի Կոնվենցիային (ընդունված 1951 թ.) և 1967թ. նրան կից արձանագրությանը Հայաստանի անդամակցությունից հետո, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը հայ փախստականներին օժանդակության և բնակարանաշինության իր ծրագրերն է իրականացնում Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի Հանրապետությունում փախստականների իրավական կարգավիճակը կանոնակարգող օրենսդրական հիմքերն են՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն — 1995 թ., իբրև ՀՀ հիմնական օրենք, որը սահմանում է ՀՀ տարածքում գտնվող բոլոր անձանց իրավական կարգավիճակը:
2. Փախստականների կարգավիճակի մասին ժնկի Կոնվենցիան, 1951 թ. և նրան կից արձանագրությունը 1967 թ., որոնց Հայաստանը միացել է 1993 թ.:
3. «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» ՀՀ Օրենքը (1994 թ. հունիս), ինչը կատարում է մի օրենքի դեր, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիություն չունեցողների կարգավիճակը, որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի տարածքում գտնվող Ադրբեջանից տեղահանված փախստականներն են:
4. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը (1995թ. նոյեմբեր), որի համաձայն Հայաստանը խրախուսում է, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ընդունումը քաղաքացիություն չունեցող անձանց:
5. «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (1999 թ. մարտ), որն անմիջականորեն սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող փախստականներին կարգավիճակի շնորհման ընթացակարգը և փախստականների իրավունքները:
Վերոնշյալ օրենսդրական ակտերի ողջ համալիրը կոչված է պաշտպանելու փախստականների և Հայաստանում ստիպողաբար վերաբնակված այլ կատեգորիաների իրավունքները:
Համաձայն Վիճակագրական նախարարության, պետռեգիստրի և ՀՀ վերլուծության պաշտոնական տվյալների, 1998 թ. հունվարի մեկի դրությամբ Հայաստանում մնացել է 311 հազար գրանցված փախստական:

«Հայ փախստականներին աջակցող լիգան» և «Հայաստանի սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը» 2001թ. օգոստոսից մինչև նոյեմբերն ընկած ժամանակահատվածում «Հայաստանում գինժառայության գորակոչվելու առնչությամբ փախստականների իրավունքների պաշտպանության մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում, Հայաստանի ԵԱՀԿ/ԺԻՄԻԳ գրասենյակի և Վարշավայի Մարդու իրավունքների պաշտպանության Հելսինկյան հիմնադրամի աջակցությամբ Երևանում և Հայաստանի շրջաններում իրականացրին մոնիտորինգ և Հայաստանի Հանրապետության գինված ուժեր գորակոչվելու՝ փախստականների իրավունքների ունահարման մասին վկայող փաստաթղթերի հավաքում:

Ծրագրի նպատակը՝ օժանդակել Հայաստանի Հանրապետությունում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց, մասնավորապես փախստականների, իրավունքներին հետևելը՝ կապված բանակ գորակոչվելու մասին ՀՀ օրենսդրությունը խախտելու հետ: Մոնիտորինգի անցկացումը կարևոր և արդի նշանակություն ուներ ամբողջատիրական վարչակարգից ժողովրդավարականին անցում կատարելու տվյալ փուլում, երբ հերթով զարգանում և հաստատվում են ժողովրդավարական արժեքները, որոնցից մեկը պետության մեջ օրենքի իշխանությունն է: (Օրենքներին հետևելը): Մինչև 1999թ. ՀՀ Ջինված ուժերում փախստականների անհապաղ գորակոչվելու հարցը կանոնակարգվում էր միմիայն ՀՀ Սահմանադրությամբ, որի համաձայն, բանակում ծառայելու պարտականությունը ՀՀ քաղաքացիների գերակայությունն է: «Փախստականների մասին» օրենքի ընդունումից հետո այս հարցը ստացավ վերջնական օրենսդրական հաստատում, սակայն գործնականում, անգամ մինչև գարնանային զորահավաքը, շարունակվում էին օրինախախտումները, որոնք համատարած բնույթ էին կրում:

Մոնիտորինգի անցկացման համար հիմք ծառայեցին կազմակերպությանն ուղղված փախստականների ահազանգերը՝ իրենց պարտադիր գորակոչելու և Հայաստանում գոյություն ունեցող հարկադիր գորակոչի, ինչպես և ՀՀ Ջինված ուժերում գինժառայության պրակտիկայի ու օտարերկրյա քաղաքացիների և ՀՀ քաղաքացիություն չունեցողների, մասնավորապես Ադրբեջանից տեղահանված փախստականների, իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգող իրավական ակտերի միջև ակնհայտ անհամապատասխանության մասին:

Ինչպիսի՞ն է փախստականներին բանակ գորակոչելու պրակտիկան, և ինչպես են իրականացվում Հայաստանի օրենքների համապատասխան դրույթները Հայաստանում 1999թ. «փախստականների մասին» օրենքի ընդունումից հետո: Ահա այս հարցերն էլ մեզ ստիպեցին մոնիտորինգ անցկացնել, որի էությունը գորակոչի հետ կապված՝ փախստականների իրավունքների մասին միջազգային և ներքին օրենսդրական ակտերի, գինվորական կոմիսարիատների փաստաթղթերի և գորակոչի ժամանակ կիրառվող միջոցների (տեխնոլոգիաների) ուսումնասիրությունն է, դրանց համեմատությունը, նշված խնդրով զբաղվող պետական և միջազգային կազմակերպությունների դիրքորոշման, ինչպես նաև հենց իրենց՝ փախստականների և նրանց հարազատների հետ անցկացված զուգահեռ հարցումների դրսևորումը:

Մենք հավաքել ենք գործեր, որոնք վկայում են գորակոչի ժամանակ ինչպես փախստականների իրավունքների, այնպես էլ ընդհանրապես ՀՀ Ջինված ուժերում ծառայության հարցերին առնչվող հայկական օրենսդրության կոպիտ ունահարման մասին: Հայտնաբերվել է շատ կարևոր մի օրինաչափություն, որի համաձայն գինկոմիսարիատների աշխատակիցների կողմից իրենց դիրքի չարաշահումներին նպաստում է փախստական գորակոչիկների և նրանց ծնողների գործնականում

իրավական բացարձակ անգրագիտությունը: Հարցման մասնակիցների 80%-ից ավելին բոլորովին տեղյակ չէին, որ բանակում ծառայելը ընդամենն իրենց իրավունքն է, և ոչ պարտականությունը:

Այնուհանդերձ, փախստականները հիմնականում են զինապարտության են անցնում կանոններ, նախօրոք դրա մասին որոշում կայացնելով, դիմում գրելով և այն ստորագրելով: Սրան նպաստում են՝

- դեռ հնուց ընտանիքներում արմատավորված երեխաների դաստիարակությունը, թե բանակում ծառայելը ցանկացած տղամարդու պարտքն է
- Հայաստանի նկատմամբ պարտքի զգացումը, որպես իրենց հայրենիքի
- տարեկիցների և դասընկերների, կամ ՀՀ քաղաքացիություն ունեցող իրենց ընկերների հետ համերաշխ լինելու զգացումը

Կա փախստականների մեկ այլ կատեգորիա, որը բանակ է գնում «ստիպված», ինչին նպաստում են՝

- հոգեբանական ճնշող իրավիճակի ստեղծումը, երբ դեռ դպրոցում պատանի փախստականներին գրանցում են տվյալ շրջանի ծառայողական կետին, այսինքն՝ հաշվառման են վերցնում (սա շարունակվում է առայսօր)
- հոգեբանական ներգործությունը, երբ փախստականը ստանում է ծանուցում զինվորական ծառայության անցնելու հարցի առնչությամբ զինկոմիսարիատ ներկայանալու առաջարկությամբ
- իրենց իրավունքների և պարտականությունների մասին չիրազեկված փախստականների «օրինապահության» զգացումը. Հայաստանում ապաստանած զինապարտության տարիքի փախստականները՝ ստանալով ծանուցումը, ներկայանում են զինկոմիսարիատ, որտեղ օրինապահ ձևով ստորագրում են զինկոմիսարիատի աշխատակիցների առաջարկած դիմումը կամավոր զինծառայության մասին (հարցման համաձայն, փախստականների նշված կատեգորիան բոլորովին տեղյակ չէ տվյալ ոլորտում ՀՀ օրենքներին, հետևաբար նաև Հայաստանի Հանրապետությունում իրենց պարտադիր զինծառայության մասին օրենքի բացակայությանը):
- «պարտքի» զգացումը. գորակոչված փախստականների կամ նրանց ծնողների թեթև առարկությունների դեպքում նրանց նախատում են, թե իրենք հայեր են, որ ստացել են սեփական հող և անասուններ, և դա նրանց բարոյապես պարտավորեցնում է: Արդյունքում, պատանի փախստականներն ու նրանց ծնողները ստորագրում են վերոնշյալ դիմումը:
- վախի զգացումը. ավելի համար դիմադրության դեպքում տեղական իշխանության ներկայացուցիչներն ու զինկոմիսարիատների աշխատակիցները նախ տուն են գալիս հորդորներով, այնուհետև սպառնում են խլել անասունները, եթե տղան բանակ չգնա և չստորագրի կամավոր ծառայության մասին դիմումը:

Մոնիտորինգի ընթացքում ակնհայտ բռնությունների մասին փաստագրված դեպքեր ամրագրել մեզ չհաջողվեց, քանի որ այն փախստականները, որոնք արդեն զինվորական ծառայությունն ավարտել են ՀՀ Ջինված ուժերում, հրաժարվում են տրամադրել որևէ գրավոր կամ ձայնագրված վկայություն զինվորական իրենց և իրենց երեխաների նկատմամբ անօրինական գործողությունների, ֆիզիկական ուժի գործադրման կամ զինվորական ոստիկանության օգտագործման մասին՝ զինվորական հավաքին նրանց տանելու նպատակով: Նրանք իրենց մտքում

Կարծում են, որ արդեն ուշացել են, և որ չարժե գուր փորփրել անցյալը: Որդին արդեն ավարտել է ծառայությունը, նոր բողոքները ոչինչ չեն տա: Նրանք վախենում են, որ դա կարող է իրենց դեմ դուրս գալ: Իսկ ներկայում բանակում ծառայող փախստականների ծնողները նաև գրավոր ցուցմունքներ չեն տալիս՝ վախենալով, որ դա կարող է վատ անդրադարձնել բանակում ծառայող իրենց որդու վրա:

Մոնիտորինգի մեթոդները

Հայաստանի մի շարք մարզերում իրավիճակի բացահայտման նպատակով մոնիտորինգի անցկացման ժամանակ մենք որոնել և ընտրել ենք, այդ թվում նաև հարցազրույցներ ենք վարել և հարցաթերթիկներ ենք լրացրել այն փախստականների շրջանում, որոնք զինվորական ծառայություն են անցել ՀՀ Ջինված ուժերում 1998-2001 թթ., ինչպես նաև հավաքել ենք փաստագրական տեղեկատվություն ՀՀ Ջինված ուժեր փախստականներին բռնի գորակոչելու օրենքի խախտումների ճշտման նպատակով: Մոնիտորինգը ընդգրկեց փախստականներով խիտ բնակեցված տարածքներ՝ փախստականների հանրակացարանները Երևան քաղաքում, Վարդենիսի, Կրասնոսելսկի, Մարտունու և Կոտայքի մարզերում: Այցելեցինք ավելի քան 250 փախստական ընտանիքների, որոնց մի մասը, ավելի կոնկրետ 75-ը համաձայնեցին մասնակցել հարցմանը և տրամադրել գործերին առնչվող իրենց կողմից տնօրինվող փաստաթղթերն ու նյութերը: Հավաքվեց օրենսդրության կոպիտ խախտումների մասին վկայող 8 գործ (բնօրինակները պահվում են արխիվում): Հարցման են ենթարկվել զինապարտության տարիքի փախստականները, նրանց ծնողները, հարևանները: Ծրագրի աշխատանքի եզրափակիչ փուլում անցկացվեցին զրույցներ հանրապետության Ջինվորական Դատախազության, ՀՀ Պաշտպանության նախարարության, մարզային զինկոմիսարիստների ներկայացուցիչների հետ, արտագաղթի և փախստականների վարչության պետի և Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանական վարչության պետի հետ՝ տվյալ խնդրի շուրջ նրանց դիրքորոշմանը ծանոթանալու նպատակով: Նաև հարցում է արվել ՀՀ Նախագահին առընթեր Մարդու իրավունքների հանձնաժողով: Արժանահիշատակ է այն փաստը, որ բոլոր վերոնշյալ կառույցները, որոնց մենք դիմել ենք, պատրաստակամորեն կազմակերպությանը տրամադրեցին իրենց տնօրինած տեղեկատվությունը:

Ձեկույցում նաև տեղ է գտել ՀՀ օրենսդրության վերաբերյալ իրավաբանի եզրակացությունը՝ միջազգային նորմերին ներքին օրենսդրական ակտերի համապատասխանության մակարդակի առումով: Այնտեսը փորձ է արվում վեր հանել փախստականներին բանակ զորակոչելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը: Աշխատանքի ընթացքում ձեռք բերված փաստագրական նյութերը ենթարկվել են ընդհանուր սոցիոլոգիական վերլուծության:

Ձեկույցը կազմվել է ստացված նյութերի, անցկացված զրույցների հիման վրա, որոնք քննարկվել են ծրագրի մասնակիցների հանդիպումների ժամանակ:

Մոնիտորինգի արդյունքները՝ բռնի բանակ զորակոչվելու հետ կապված փախստականների իրավունքների ոտնահարման մասով, կներկայացվեն միջազգային իրավական կազմակերպություններ, Հայաստանի ԵԱՀԿ գրասենյակ, Ազգային ժողովի դատաիրավական հանձնաժողով, ՀՀ Կառավարություն, ինչպես նաև այլ ասոյաններ, Հայաստանի Հանրապետության Ջինված Ուժերում ծառայելու իրենց իրավունքից օգտվել չցանկացող փախստականների իրավունքները պաշտպանելու նպատակով:

Գլուխ I. Խնդրի ներկայացումը

Քսաներորդ դարի վերջին տասնամյակը նշանավորվեց Հայաստանում ավելի քան 360 հազար հայ-փախստականների հայտնվելով, որոնք 1988-92թթ. բռնի այստեղ էին տեղափոխվել Ադրբեջանից, Ղարաբաղյան հակամարտության հետևանքով: ՀՀ-ում փախստականների ադապտացման (հարմարվելու) փուլը համընկավ ինչպես Հայաստանում զինվորական ժամանակաշրջանի, այնպես էլ հայկական բանակի ստեղծման ժամանակաշրջանի հետ, երբ իրավապահ մարմինների օժանդակությամբ զինապարտության տարիքի հասած և զինծառայությունից խուսափող երիտասարդներին մասսայականորեն հավաքագրում էին զինվորական ծառայություն անցնելու համար: Միաժամանակ, հարկադիր բանակ էին զորակոչվում նաև զինապարտության տարիքի փախստական երիտասարդները, այն հիմնավորմամբ, թե փախստականները էթնիկ հայեր են, ուստի փաստացի համարվում են Հայաստանի քաղաքացիներ (ինչը հաստատվում է նաև ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի հրատարակած բրոշյուրում):

Ճնշման տակ փախստական զորակոչիկները հիմնականում ստորագրում էին դիմում այն մասին, թե իրենք իբրև թե կամովին համաձայնել են զինծառայություն անցնել բանակում: Առաջ անցնելով՝ նշենք, որ պետությունը ծառայությունից խուսափելու կամ դասալիքության համար փախստականներին պատասխանատվության կանչելու իրավական հիմքեր չունեն (չնայած մոնիտորինգի ժամանակ մենք հայտնաբերել ենք նմանօրինակ մի դեպք, որի վերաբերյալ փաստերը կներկայացնենք ավելի ուշ), քանի որ նրանք Հայաստանի քաղաքացիներ չէին հանդիսանում և պարտավոր չէին ծառայել բանակում, և սա որոշ ծնողների հնարավորություն էր տալիս չնայած բարոյահոգեբանական ճնշմանը, ամենաթողությունից պաշտպանել իրենց երեխաների իրավունքը:

Այս գործընթացը հատուկ ծավալների հասավ այն ժամանակահատվածում, երբ ՀՀ-ում փախստականների իրավական կարգավիճակը, այսինքն՝ բնակչության տվյալ դասի իրավունքներն ու պարտկանությունները իրավաբանորեն սահմանված չէին: Մասնավորապես, դրան էր նպաստում Հայաստանում փախստականների բնակվելու տասնմեկ տարիների ընթացքում «Փախստականների մասին» օրենքի բացակայությունը, ինչի հետևանքով, զինվորական բարձր ղեկավարության **բանավոր կարգադրությունների** հիման վրա Հայաստանի ողջ տարածքում համապատասխան պետական չինովնիկները տարբեր մակարդակներում իրականացնում էին ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ փախստականների զանգվածային զորակոչ ՀՀ Ջինված Ուժեր: Այսպիսով՝ 1991թ.-ից, այսինքն՝ Հայաստանում անկախության հռչակումից հետո, փոքրաթիվ բացառություններով, զինապարտության տարիքը բոլորած գրեթե ողջ փախստական երիտասարդությունը զորակոչվում էր բանակ:

Անհրաժեշտ է նշել, որ 2000-2001 թթ. նշված խնդրի սրությունը փոքր ինչ նվազեց, քանի որ փախստական երիտասարդները տաս տարվա ընթացքում մասամբ հարմարվեց Հայաստանին, և բանակում ծառայելը շատերի համար իրոք կամավոր գործ դարձավ: Այնուհանդերձ, սա չի կարող ծառայել իբրև չափանիշ, թե տվյալ խնդրի առնչությամբ փախստականների իրավունքներն այլևս չեն ոտնահարվում: Փախստական երեխաների տասնյակ ծնողներ միանգամայն դեմ են իրենց երեխաներին բանակ զորակոչելուն:

1993 թ. Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիային միանալուց հետո, Հայաստանը պարտավորվեց պահպանել փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային նորմերը և դրանց համապատասխան զարգացնել փախստականների խնդիրները կարգավորող իր ներքին օրենսդրությունը: Սակայն մինչև վերջերս Հայաստանի Հանրապետությունում փախստականների խնդիրները կարգավորող օրենսդրություն գոյություն չունեի, որը սահմաներ և ձևակերպեր պետության և փախստականների փոխհարաբերությունները, ինչն էլ փախստականներին զրկում էր կյանքի բազում ոլորտներում իրենց անհրաժեշտ օրինական պաշտպանությունն ապահովելու հնարավորությունից:

Փախստականների և պետության իրավունքներն ու պարտականությունները կարգավորող իրավական դաշտի բացակայությունը երբեմն հանգեցնում էր փախստականներին առնչվող օրենսդրական այլ ակտերի կամայական մեկնաբանությանը և բանակում ծառայելու հետ կապված ուղղակի կամայականություններին (մշտական հայկական գրանցումը ԽՍՀՄ անձնագրերում զինկոմիսարիատներում դիտվում էր իբրև Հայաստանի քաղաքացիություն և համարվում էր փախստականին զորակոչելու հիմք), տարբեր աստիճանների թույլ էր տալիս նշված հարցը շահարկել իրենց օգտին:

1999թ. մարտի 3-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Փախստականների մասին» օրենքը ճշտեց վիճելի հարցը և փախստականների զանգվածային զորակոչի ավանդույթում փոփոխություն մտցնելու հիմք ծառայեց: Օրենքի 18-րդ հոդվածում առաջին անգամ տեղ գտավ ընդհանուր ձևակերպում, որում սակայն չի նշվում պարտականությունը, այլ ընդգծվում է **փախստականների իրավունքը** ծառայել ՀՀ բանակում **ցանկության դեպքում**:

Այնուամենայնիվ, պետությունը շարունակում է ինտեգրայով փախստականներին կցել զորահավաքման կետերին՝ նրանց ծանուցումներ ուղարկելով, զինծառայության կանչել բոլոր երիտասարդ փախստականներին՝ օգտվելով նրանց իրավական անհրազեկությունից, նրանց առաջարկելով և անհրաժեշտության դեպքում ստիպելով կամավոր հիմունքներով զինծառայության անցնելու մասին դիմումներ գրել, ինչը առաջին հերթին ՀՀ Սահմանադրության և այնուհետև «Փախստականների մասին» օրենքի խախտում է:

**Գլուխ II.
Մոնիտորինգի անցկացում**

Ա. Օրենսդրության վերլուծություն

Յուրաքանչյուր մարդ, որտեղ էլ որ նա գտնվի, ունի իրավունքի
սուբյեկտ լինելու իրավունք
*(Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային
համաձայնագիր)*

1995 թ. հուլիսին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի համաձայն (հոդված 47) «Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համաձայն օրենքով սահմանված կարգի»:

Տերմինների համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ ինչպես ՀՀ քաղաքացիներին, այնպես էլ այլ կարգավիճակ ունեցողներին վերաբերող մի շարք հոդվածներում չի օգտագործվում «քաղաքացի» տերմինը, այլ տեքստում նշվում է, օրինակ՝ «Յուրաքանչյուրը պարտավոր է հարգել Սահմանադրությունն ու օրենքները... (ՀՀ Սահմանադրություն, հոդված 48):

Նշված դրույթը միանշանակ է (քանի որ Սահմանադրությունը, համաձայն 7-րդ հոդվածի անմիջական է և ունի բարձրագույն իրավական ուժ), այսինքն՝ բանակում ծառայելը ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց, այդ թվում փախստականների պարտականությունը չէ:

Այնուամենայնիվ, հարցը բաց էր մնում, չնայած որ 17.06.94 թ.-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է «ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական դրության մասին օրենքը», որի 4-րդ հոդվածում նշված է, թե օրենքի դրույթները տարածվում են ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցողների վրա, եթե ՀՀ օրենսդրության մեջ այլ բան նախատեսված չէ: Եթե իհարկե հաշվի առնենք, որ այդ պահին ՀՀ-ում գտնվող փախստականների իրավական կարգավիճակը հստակ որոշված չէր, բայց միևնույն ժամանակ նրանք Հայաստանի քաղաքացի չէին, ապա կարելի է ասել, որ «Օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքի դրույթները տարածվում են թե՛ փախստականների և թե՛ այն անձանց վրա, ովքեր ՀՀ քաղաքացիություն չունեն: Համաձայն «ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասին» օրենքի 25-րդ հոդվածի, օտարերկրացի քաղաքացին Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերում զինվորական ծառայություն անցնելու պարտականություն չունի:

1995 թ. վերջին ընդունվեց «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքը, որի համաձայն, օտարերկրյա քաղաքացի են համարվում ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձինք, ովքեր ունեն այլ երկրի քաղաքացիություն, իսկ քաղաքացիություն չունեցող անձինք են համարվում նրանք, ովքեր չունեն ՀՀ քաղաքացիություն և այլ պետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ:

14.10.1998 թ. ընդունվեց «Ջինապարտության մասին» նոր ՀՀ օրենքը: Առաջին հոդվածում «օրենքի կանոնակարգման առարկան» նշվում է, որ «Տվյալ օրենքը կանոնակարգում է ՀՀ քաղաքացիների զինվորական հաշվառման,

զինպատրաստության, զորակոչի, զինծառայության, Հայաստանի Հանրապետության պահեստային զորամասերի կազմակերպման և պատրաստունակության բերելու հետ կապված հարաբերությունները»: Այնուհետև տեքստում օգտագործվում է միայն «քաղաքացիներ» տերմինը: Բացի այդ, «զինծառայող» տերմինի բացատրության ժամանակ, 19-րդ հոդվածում նշվում է, որ «զինծառայողներն այն քաղաքացիներն են, որոնք անցնում են պետական ծառայություն զինված ուժերում և այլ զորքերում...»: Օրենքի 20-րդ հոդվածի, որտեղ նշվում են ծառայության տեսակները, 3-րդ կետում նշվում է, որ ՀՀ քաղաքացիներ չհանդիսացող անձանց համար «զինված ուժերում ծառայելը հնարավոր է միայն պայմանագրով՝ կամավոր հիմունքներով», այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության հետ գրավոր համաձայնության կայացման հիման վրա: Անհրաժեշտ է նշել, որ տվյալ հոդվածում խոսքը կրկին քաղաքացիների մասին է: 20-րդ հոդվածի 4-րդ կետում նշվում է, որ օտարերկրյա քաղաքացիների ծառայությունը ՀՀ զորամասերում կանոնակարգվում է միջպետական համաձայնագրերով: Քանի որ փախստականները բռնի արտահանվել էին մի երկրից, որի հետ նշված միջպետական համաձայնությունների կայացման մասին խոսք լինել չէր կարող, իսկ փախստականների կարգավիճակին վերաբերող միջազգային ստանդարտներում բանակում ծառայության մասին որևէ հիշատակություն չկա, ապա «Զինապարտության մասին» օրենքին առնչվող տվյալ հարցը մնում է անպատասխան:

Բանակում պարտադիր ծառայության հարցին որոշ պարզություն մտցրեց 27.03.1999թ. ընդունված «Փախստականների մասին» օրենքը: Նշված օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, «փախստականն **իրավունք ունի** ծառայել Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերում օրենքով սահմանված կարգով»: Ուստի խոսքը ոչ թե բանակում ծառայելու պարտականության, այլ բացառապես **իրավունքի** մասին է: Բացի այդ, ՀՀ օրենսդրությունը չի կանոնակարգում Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերում փախստականների կամավոր ծառայության կարգը, համաձայնությունների կայացումը, ժամկետները, ծառայության պայմանները, և այլն: Արժանահիշատակ է այն, որ չնայած օրենքի ընդունմանն ու վերոնշյալ ձևակերպմանը, փախստականները զինծառայության են կանչվել հարկադիր կարգով ընդհուպ մինչև 2000թ. գարնանային զորակոչը «համաձայն ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի բանավոր կարգադրության»:

Համենատարածված նպատակով ուսումնասիրվել են Ռուսաստանի Դաշնության «Փախստականների մասին» և «Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքները: «Փախստականների մասին» օրենքում ոչինչ նշված չէ բանակում ծառայելու մասին ոչ փախստականների իրավունքների և ոչ էլ պարտականությունների առնչությամբ: «Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքում, առաջին հերթին հիմնական հասկացությունների մեջ նախօրոք նշվում է, որ փախստականը՝ օտարերկրյա քաղաքացի է, որին ՌԴ-ում փախստական են ճանաչել, իսկ 5-րդ «Զինծառայության նկատմամբ հարաբերությունը, զորամասերում և զինվորական հաստատություններում աշխատանքը» հոդվածում նշվում է հետևյալը. «Օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա և Ռուսաստանի դաշնության քաղաքացիություն ունեցողները, համաձայն ՌԴ միջազգային համաձայնագրերի, չեն տանում զինվորական ծառայություն և չեն կարող աշխատանքի ընդունվել Ռուսաստանի Դաշնության Ջինված

Ուժեր, այլ զորքեր և զինվորական միավորումներ ու օրգաններ իբրև քաղաքացիական աշխատակազմ, եթե Ռուսաստանի Դաշնության օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ընդհանուր առմամբ, ստորև ներկայացված հիմնական իրավական փաստաթղթերի համալիրը սահմանում է Հայաստանում զինծառայության հետ կապված փախստականների իրավունքները հետևյալ ձևով՝

ՀՀ Սահմանադրության համաձայն, որը որոշում է Հայաստանի տարածքում գտնվողների իրավական կարգավիճակը, զինծառայության են կանչվում միայն **Հայաստանի քաղաքացիները:**

*Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը
հոդված 47*

• «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքի համաձայն, օտարերկրյա քաղաքացիներն պարտավորված չեն ծառայել Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում:

*Օտարերկրյա քաղաքացիներ Հայաստանի Հանրապետությունում պարտավոր չեն ծառայել ՀՀ Զինված Ուժերում
հոդված 25*

• «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում չի նշվում բանակում ծառայելու՝ փախստականների պարտականությունների մասին:

*Զինվորական պարտք՝ քաղաքացիների սահմանադրական պարտքն է մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը
Հոդված 3
Այլ պետությունների քաղաքացիները կարող են ծառայել ՀՀ զորամասերում պայմանագրային հիմունքներով:
Հոդված 20*

• «Փախստականների մասին» ՀՀ օրենքում նաև նշված են փախստականների պարտականությունները: Ընդհանուր ձևակերպման մեջ նշվում է փախստականների **իրավունքը**՝ ծառայել ՀՀ բանակում ցանկության դեպքում:

*Փախստականը իրավունք ունի ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ծառայել Զինված ուժերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
Հոդված 18*

Ինչպես երևում է, հիմնական օրենքների ողջ համալիրը սահմանում է մի դրույթ, որի համաձայն բանակ զորակոչելը որպես պետության գերակայություն տարածվում է միմիայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա և միմիայն ՀՀ քաղաքացիների պարտականությունն է:

Բ. Ջրույցների և հարցումների վերլուծություն

Ծրագրում վեր հանված՝ Հայաստանի Հանրապետությունում մեր պետության հիմնական օրենքի ուսնահարման մասին թեզի արդյունքում անց են կացվել բևեռացված հարցազրույցներ զորակոչված փախստականների (նրանց ծնողների) հետ, որոնք զորակոչման պահին ունեցել են փախստականի կարգավիճակ, ինչպես նաև զրույցներ Ջինվորական դատախազության, Պաշտպանության նախարարության, չորս մարզային գինկոմիսարիատների ներկայացուցիչների, Միգրացիայի և փախստականների վարչության պետի և Հայաստանում ՄԱԿ-ի Փախսականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի իրավաբանի հետ:

Հարցումներ

Հարցումներն անց են կացվել Երևան քաղաքում, Վարդենիսում և Չամբարակում (Կրասնոսելսկում) և Գեղարքունիքում: Հարցազրույցների ժամանակ ստացված լրացուցիչ տեղեկությունները ընդլայնեցին հետազոտության աշխարհագրությունը, ինչը դրդեց նշված գործընթացում ընգրկել նաև Կոտայքի և Մարտունու մարզերը:

Հարցազրույցները ձայնագրվում էին, և (կամ) միաժամանակ լրացվում էին հարցաթերթիկները: 8 դեպքում հարցման ենթարկվածները համաձայնեցին տրամադրել պաշտոնական և ոչ պաշտոնական այնպիսի փաստաթղթեր, որոնք արտացոլում են ՀՀ Ազգային Բանակ իրենց զորակոչվելուց սկսած ժամանակահատվածը: Դրանք մամուլում նշված տվյալներ են, զորակոչիկների ծնողների դիմումները, բողոքներին պաշտոնական պատասխանները և այլն:

Սակայն հարցումն անցկացնելու ընթացքում հարցազրույց վարողները բախվում էին լուրջ դժվարությունների՝ հարցման ենթարկվածների մեծամասնությունը տեղեկատվություն էր տրամադրում միայն բանավոր ձևով, հրաժարվելով տրամադրել մեզ իրենց պատմությունը որևէ ձևով (բաց կամ անանում) օգտագործելու իրավունքը՝ իրենց որոշումը հիմնավորելով նրանով, թե դա կարող է անցանկալի հետևանքների հանգեցնել: Մյուսներն ակտիվ մասնակցում էին հարցմանն ու պատմում այն ամենը, որ կատարվել էր իրենց հետ, սակայն չէին համաձայնում պաշտոնական մասնակցություն ունենալ հետազոտությանը (չէին ցանկանում, որ իրենց ազգանուններն ու պատմությունները տեղ գտնեն զեկույցում կամ մեկ ուրիշ տեղում): Նման պատմությունները ընհանրացվում էին համաձայն հարցազրուցավարների կատարած նշումների:

Արդյունքում 250 մարդուց հավաքվեց 75 հոգանոց պայմանական խումբ, որոնք համաձայնեցին լրացնել հարցաթերթիկներն ու պատասխանել հարցազրուցավարի հարցերին: Քանի որ ծրագրի խնդիրների մեջ չէր մտնում խնդրի բազմակողմանի և գիտականորեն հիմնավորված ուսումնասիրությունը Հանրապետության մասշտաբով՝ համապատասխան «դուրս բերումներով» քանակական բնորոշիչներով, ապա հիմնական շեշտը դրվեց յուրօրինակ փաստագրական նյութերի ուսումնասիրության և ստացված տվյալների բազմակողմանի և բովանդակային մեկնաբանության՝ տեղեկատվության որակական վերլուծության վրա:

Ստացված տվյալների նախնական ընդհանրական հետազոտությունը թույլ տվեց գատորոշել հարցման ենթարկվածների երկու հիմնական պայմանական դաս և առանձնացնել այդ դասակարգման հիմնական գործոնը:

Առաջին դասի մեջ մտան այն հարցվողները, որոնք գորակոչի պահին չգիտեին «ՀՀ Զինված ուժերում կամավոր ծառայության» իրենց իրավունքի մասին: Երկրորդ դասի մեջ մտան այն գորակոչիկները, որոնք գորակոչի պահին գիտեին «Հայաստանի Զինված Ուժերում չծառայելու» իրենց իրավունքի մասին: Երկրորդ դասը կազմեցին այն գորակոչիկները, որոնք գորակոչի պահին իրագել էին բանակի և զինծառայության ոլորտում իրենց իրավունքներին:

Առաջին դասի հարցվողները հիմնականում չեն կատարել զինծառայությունից խուսափելու որևէ փորձ և զինկոմիսարիատների աշխատողներին որևէ ընդդիմություն չեն ցուցաբերել: Նրանց հիմնական հատվածը Հայաստանի Ազգային Բանակում իրենց զինվորական ծառայությունը համարել էին օրինական: Այն հարցին, թե «Արդյոք գիտե՞ի՞ք ՀՀ Զինված ուժերում չծառայելու Ձեր իրավունքի մասին», հարցման մասնակիցների ավելի քան 80%-ը պատասխանել է «ոչ» կամ իմացել է արդեն ծառայությունն անցնելուց հետո»: Տվյալ դեպքերում փախստականների իրավունքները կոպտորեն ոտնահարվել են սկսած այն պահից, երբ փախստականները մինչև զինապարտության տարիքին հասնելը ծանուցումներ են ստացել, համարվել են զինծառայության համար պիտանի և վերցվել են հաշվման: Երիտասարդներին բանակ էին տանում տանից, աշխատավայրից, օդակայանից: Գրանցվել է մի դեպք, երբ Վարդենիսի զինկոմիսարիատի աշխատակիցները ուղղակի հենց նստարանից հանել ու տարել են տասներորդ դասարանի աշակերտ, Խաչադքյուր գյուղի մնակիչ Պավել Կարապետյանին: Պավելը կատարվել է ավարտական քննությունների նախօրեին, որի արդյունքում Պավելն այդպես էլ չկարողացավ ավարտել իր ուսումը դպրոցում և միջնակարգ կրթություն ստանալ: Տվյալ պահին Պավել Կարապետյանը զինվորական ծառայություն է անցնում Մեղրիի զորամասերից մեկում: Ծնողները դիմել են մեզ նամակով խնդրելով օժանդակել նրան բանակից գոնե մեկ ամիս շուտ ազատմանը (նա արդեն ծառայել է մեկուկես ամիս), որպեսզի երիտասարդը հասցնի հունիսին հանձնել քննություններն ու իր դասընկերներից գոնե երկու տարի հետո հասունության վկայական ձեռք բերի:

Նշված խմբում հարցազրուցավարի այն հարցին, թե «Զորակոչից հետո Ձեզ առաջարկե՞լ են ստորագրել ՀՀ Զինված ուժերում կամավոր հիմունքներով ծառայության անցնելու մասին դիմում», 17%-ը պատասխանել է «այո»։ Նրանք ստորագրել են թուղթն առանց հնարավորություն ունենալու ծանոթանալ նրա բովանդակությանն ու համարել են, որ դա պարզապես գորակոչի ընթացակարգի անհրաժեշտ քայլերից մեկն է:

Ավելի լավ պատկերացում ունենալու համար ուսումնասիրենք փախստականներին բանակ գորակոչելու մի քանի մասնավոր դեպք:

ԴԵՊՔ 1. «Փաստաթղթերդ այրվել են, ծառայիր կրկին»: Այսպիսի վերնագրով տպագրվել էր մի փախստական գորակոչիկի մասին մի հոդված որը մինչև օրս շատ դժվար իրավիճակում է գտնվում: Մեզ հաջողվեց գտնել այս հոդվածի հերոս Ներսես Նազարյանին և նրանից հարցազրույց վերցնել: Զրույցի ընթացքում պարզվեց, որ 1998թ. Ներսես Նազարյանին բռնել են Երևանի օդակայանում և ուղարկել Մարտունու շրջան զինվորական ծառայություն անցնելու համար՝ առանց նույնիսկ բժշկական քննություն ացկացնելու: Ինչպես պնդում է ինքը՝ Ներսեսը, դեռ

օդակայանում նա ստիպված էր ստորագրել կամավոր հիմունքներով զինծառայության անցնելու մասին դիմումը, քանի որ նրան տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, թե ինքը հետապնդման մեջ է զինծառայությունից խուսափելու հետ կապված ու թե ինքն ընտրություն չունի՝ զինվորական ծառայություն բանակում կամ ձերբակալություն և ազատագրվում: Ձորակոչից տասնչորս օր անց Նազարյանը հայտնվեց զինվորական հոսպիտալում, իսկ մեկ ամիս անց առողջական պատճառներով ճանաչվեց պիտանի ոչ-շարքային ծառայության համար, և նրան թույլ տվեցին վերադառնալ տուն: Ջինվորական տոմս նա այդպես էլ չստացավ: Վեց ամիս անց Նազարյան Ներսեսին կրկին կանչեցին Երևանից, որտեղ նա այդ պահին փաստացի բնակվում էր, Մարտունու զինկոմիսարիատ, որտեղ նրան տեղեկացրին, որ 1998թ. նոյեմբերի 21-ին նրան կրկին բանակ են զորակոչում, փաստորեն կրկնակի զորակոչի է ենթարկվում: Նրա հարցերին պատասխանեցին, թե իր կրկնակի զորակոչի պատճառը շատ պարզ է. նրա զինվորական տոմսն այրվել է, ուստի նրան անհրաժեշտ է կրկին ծառայություն անցնել: Ներսեսի խոսքերով իր նկատմամբ ուժ գործադրելով (դեմքին հարվածելով)՝ նրան կրկին ստիպել են ստորագրել կամավոր հիմունքներով զինվորական ծառայություն անցնելու մասին դիմումն ու նշված օրը ներկայանալ զինկոմիսարիատ հավաքման կետ տեղափոխվելու նպատակով: (Սա տեղի է ունեցել 1998թ. նոյեմբերին, նախքան «Փախստականների մասին» օրենքի ընդունումը): Նշված ժամկետում Ներսես Նազարյանը զինկոմիսարիատ չի ներկայացել: 2000 թ., Նազարյանի խոսքերով, նրան կրկին ծանուցում են ուղարկել: Նա չի ներկայացել Մարտունու զինկոմիսարիատ: Փախստականների և արտագաղթի վարչությանը նրա հարցում-դիմումին «Արդյո՞ք փախստականները պետք է ծառայեն բանակում», նշված բաժնի պետ Ա. Հարությունյանը գրավոր պատասխանել է (փաստաթուղթը պահպանվել է), թե օրենքի համաձայն փախստականների համար զինծառայությունը կամավոր է: Այս պատասխանը Նազարյանը ներկայացրել է Մարտունու զինկոմիսարիատ: Նազարյանը նաև դիմել է Ջինվորական դատախազություն: Նրան ընդունած աշխատակիցը՝ նայելով Նազարյանի անձնագիրը (դեռ ՀՀ քաղաքացիությունը չընդունած փախստականներն այդ ժամանակահատվածում ունեին խորհրդային շրջանի անձնագրեր, որն օգտագործում էին փախստականի վկայականի փոխարեն) պատասխանել է, որ ինքը ենթակա է զինծառայության, քանի որ անձնագրում մշտական գրանցում ունի (նշելք, որ գյուղական բնակավայրերում բոլոր փախստականները գրանցում ունեն, չնայած ՀՀ քաղաքացի չեն հանդիսանում): 2001 թ. օգոստոսին Նազարյանը ստիպված է եղել ամբողջ մեկ շաբաթ թաքնվել ծանոթների մոտ, քանի որ նրա պնդմամբ նույն թվականի օգոստոսի 25-ին իր հետևից կրկին եկել են զինկոմիսարիատի աշխատողները: 2001թ. նոյեմբերի 13-14 Նազարյանն ինքն է ներկայացել Մարտունու զինկոմիսարիատ, որպեսզի պարզի իր զինգրքույկի հետ կապված իրավիճակը: «Ինձ ասացին, գրի բանակում կամավոր զինծառայության մասին դիմում: Այնուհետև կգնաս բանակ, ու մի քանի ամսից քեզ կգորացրենք ու կտանք զինգրքույկը»: Ներսեսը դեռ դիմումը չի գրել՝ որոշելով օգտվել չծառայելու իր իրավունքից:

ԴԵՊՔ 2. Փախստական զորակոչիկի Հայկ Հայրապետյանի մայրը պատմեց այն մասին, որ զինվորական ոստիկանությունն իր որդուն բռնել է 2000թ. մայիս ամսին, Ջվարթնոց օդակայանում, երբ վերջինը Երևան էր եկել Վոլգոգրադից: Սոր բողոքներին զինվորական ոստիկանության աշխատակիցները պատասխանել են, որ

Հայկը հետապնդման մեջ է: Որդուն բաց են թողել միայն այն բանից հետո, երբ մայրը համաձայնել է ստորագրել, որ ինքը հաջորդ օրը որդու հետ զինկոմիսարիատ է ներկայանալու: Զինծառայության կամավոր լինելու մասին օրենքի դրույթին անտեղյակ Հայրապետյանը հավանաբար կհամաձայներ երկու տարի ծառայել, եթե չլիներ տուն վերադառնալու պատճառ դարձած ծանր հիվանդությունը: Նրանից հետո, երբ ընտանիքում տեղեկացան «Փախստականների մասին» օրենքի դրույթին, զորակոչի անօրինականության վերաբերյալ գրավոր դիմումներ-բողոքներ ներկայացրին տարբեր ատյաններ: Գրավոր պատասխանների մեջ կարելի է առանձնացնել ՀՀ Նախագահի խորհրդական, Գլխավոր զինվորական քննիչ Դ. Գ. Դալիբալթայանի անորոշ պատասխանը, 19.06.2000 թ., որտեղ նա գրում է, թե փախստականներին զորակոչելու հարցը քննարկվում է ՀՀ օրենսդիր իշխանության մակարդակում, և որոշում կայացվելու դեպքում իրենք տեղյակ կպահեն ընտանիքին:

Նամակը գրված է 12.06.2000 թ., այսինքն «Փախստականների մասին» օրենքի ընդունումից շուրջ մեկ տարի և երեք ամիս անց: Դալիբալթայանի պատասխանն իհարկե կասկածներ է առաջացնում արդեն գործող «Փախստականների մասին» օրենքին նման բարձր պաշտոնյայի անիրազեկության առումով:

ԴԵՊՔ 3. Ոչ հասարակ իրավիճակում էր հայտնվել Եփրեմյանների ընտանիքը, որ բնակվում էր Վարդենիսի շրջանի Գեղամասար գյուղում: 2000թ. նոյեմբերի 3-ին զինկոմիսարիատից եկած ծանուցման հիման վրա Վիտալիկ Եփրեմյանի հայրն ու մայրն իրենց որդուն բերեցին զինկոմիսարիատ՝ բանակում ծառայության անցնելու կապակցությամբ:

Ինչպիսի՞ն էր ծնողների զարմանքը, երբ երեք օրից որդին վերադարձավ: Նա պատմեց, թե իրեն վերադարձրել են որպես փախստականի. Հանրապետական հավաքագրման կետում բոլոր փախստականներին հավաքել էին առանձին սենյակում ու սկսել էին համոզել, որ նրանք դիմում ստորագրեն կամավոր զինծառայության մասին: Երբ նրանք բոլորը հրաժարվել էին, նրանց բոլորին ազատ էին արձակել՝ առանց հոգ տանելու նրանց տուն վերադարձնելու մասին (հավաքագրման կետը Երևանում է գտնվում, իսկ Գեղամասար գյուղը Երևանից գտնվում է 180 կիլոմետր հեռավորության վրա): Այնուհետև Եփրեմյան ընտանիքին երկու երեք օրից այցելեցին տեղական զինկոմիսարիատի աշխատակիցներն ու Վարդենիս քաղաքի վարչակարգի ներկայացուցիչը: Նրանց կանչեցին գյուղխորհուրդ և գրավոր համաձայնություն պահանջեցին այն մասին, որ իրենց որդուն տանեն բանակ: Ծնողները հրաժարվեցին:

Հոր պատմածից՝

Հարց՝ Ձեր վրա հոգեբանական ճնշում գործադրե՞լ են:

Պատասխան՝ Հենց ինքը՝ զինկոմը և նրա տեղակալներն էին եկել, որպեսզի ինձանից գրավոր համաձայնություն ստանան այն մասին, որ իմ որդին գնալու է բանակ: «Տեսեք, հետո կզոջաք, բայց ուշ կլինի», - ասում էր նա: Իսկ թե ինչն է ուշ լինելու, չգիտեմ:

Հարց՝ Իսկ ուրիշ էլ ե՞րբ է ճնշում գործադրվել:

Պատասխան՝ Առաջին անգամ զինկոմիսարիատում, իսկ հետո գյուղխորհրդում:

Սոր պատմածից՝ «Ես աշխատում եմ գյուղխորհրդում որպես հավաքարար: Ինձ ասեցին, թե կանչում են: Մտա առանձնասենյակ, տեսա նստած է Ենգոյանը: Հարցրի. «Ինչու՞ եք կանչել»: Ասաց. «Որդուդ հարցով, ինչու՞ բանակ չի գնացել»: Ես ասացի, որ որդուս սահմանվածի պետ ուղարկել են, իսկ իրենք հետ են դարձրել: Նա ասաց. «Հիմա դու պետք է կամավոր դիմում գրես, որ քո երեխան գնում է ծառայելու»: Ես ասեցի, որ դա

հնարավոր չէ, ես իմ որդու թշնամին չեմ: Եթե կա համապատասխան կարգ և օրենք, տարեք ծառայության: Եթե ոչ, թող որդիս մնա: Հետո նա ասաց. «Դուք ստացել եք սեփական հող, անասուններ, տուն, տեսեք, ամեն ինչից կզրկվեք»: Իսկ ես ասացի. «Դա իմ սեփականությունն է, ու ես դրա նկատմամբ իրավունք ունեմ»:

Այս պատմությունը մինչ օրս շարունակվում է: 2001թ. ապրիլ ամսին Եփրեմյան Վիտալիկը զինկոմիսարիատ ներկայանալու մասին նոր ծանուցում է ստացել:

Վերոնշյալ բոլոր երեք դեպքերն էլ վերաբերում էին առաջին դասին: Իրողության առավել լավ պատկերացման համար անհրաժեշտ է ավելացնել մի քանի օրինակ այն դեպքերից, երբ փախստականն ու նրա ծնողները զորակոչից առաջ կամ դրանից հետո բանակում փախստականների կամավոր հիմունքներով ծառայելու իրավունքին տեղեկանալուց հետո, սկզբունքորեն համարում էին, որ բանակում ծառայելը բնական և անխուսափելի անհրաժեշտություն է: Ահա մի շարք օրինակներ`

Սլավիկ Սարգսյան, ներկայում բանակում ծառայող փախստականի հայր, գյուղ Կախան, Վարդենիսի ենթամարզ

Սլավիկ, քանի զորակոչիկ որդի ունես:

Մեկ որդի, և նա ծառայում է:

Ե՞րբ են որդուդ բանակ զորակոչել:

1999թ. հոկտեմբերի 22-ին: Արդեն երկրորդ տարին է, ինչ ծառայում է:

Գիտե՞իր, որ որդիդ կարող էր և բանակում չծառայել:

Չգիտեի, նա ասաց դե եթե պիտի ծառայեմ, ուրեմն կգնամ, որ ավարտեմ...

Իսկ ինքը գիտե՞ր, որ կարող է չգնալ ծառայելու:

Այն ժամանակ ո՞վ գիտեր դրա մասին: Ոչինչ չկար, ասում էին, որ եթե նույնիսկ երեսուն տարեկանում, պետք է ծառայեն Հայաստանում: **А когда узнали?**

Իսկ խոսակցություններից այն ժամանակ չգիտեի՞ք:

Իսկ Ձինկոմիսարիատում չասացին, որ փախստականը կարող է չգնալ:

Ես լսել էի, որ կարող ես գնալ, եթե ուզում ես, ու չգնալ, եթե չես ուզում, անկախ տարիքից, եթե պետք է, պիտի ծառայի:

Ո՞վ ասաց:

Ժողովրդի մեջ էին ասում.....

Իսկ Դուք ինչ-որ թուղթ գրել ու ստորագրել եք, որ Ձեր որդին կամավոր ծառայի բանակում:

Հենց որ ծանուցումը տվեցին, գնաց ծառայելու:

Իսկ ո՞վ բերեց ծանուցումը:

Գյուղխորհրդի նախագահը տվեց:

Իսկ նա չասաց, որ կարելի է կամավոր գնալ ծառայելու:

Ի՞նչ, «կամավոր», ասում էր. «Թուղթը եկել է, ուրեմն պետք է գնալ, կարգն է այդպիսին»:

Ե՞րբ է վերադառնալու Ձեր որդին:

Հոկտեմբերի 22-ին ավարտվում է ծառայությունը, երբ որ կթողնեն, այն ժամանակ էլ կգա:

Սլավիկ, իսկ դու վերջերս չե՞ս լսել, որ եթե փախստականը զինապարտության տարիքի է, ու նրան պետք է կանչեն բանակ, նա իրավունք ունի չգնալու՞:

Լսել եմ, մարդիկ էին ասում: Բայց նաև լսել եմ, մարդիկ էին ասում, որ ուզում ես ամուսնացած եղիր, երեխաներ ունեցիր, որտեղ էլ որ լինես, պետք է կատարես քո պարտքը Հայաստանի նկատմամբ, իսկ հետո ուր ուզում ես, գնա:

Սլավիկ, իսկ եթե այնպես ստացվեր, որ քեզ ասեին, թե որդիդ կարող է կամավոր ծառայել, թույլ կտաի՞ր նրան ծառայել:

Այո...

Ահա ևս մեկ դեպք՝

Ժասմեն Գեորգիի Աբգարյան, գյուղ Արտանիշ, Չամբարակի ենթամարզ

Ծանուցումով կանչել էին նրան (որդուն) և տարել: Ես չգիտեի, որ հայկական բանակում պետք է ծառայեն միմիայն Հայաստանի քաղաքացիները, որ նման իրավունքներ կան: Եթե հմանայի, իհարկե ինչպես ցանկացած որդեսեր մայր, կօգտվեի այ իրավունքից: Գիտեք ինչպես, նաև կուզենայի, որ ծառայեր, բայց եթե հնարավորություն լիներ չծառայելու... Բայց դե քանի որ արդեն ծառայել վերջացրել է... իմ եղբայրները նույնպես ծառայել են, այնպես որ...

«Փախստականների մասին» օրենքում նշվում է այն մասին, որ փախստականը իրավունք ունի ծառայելու Ջինված ուժերում: Իսկ զորահավաքի պահին Դուք գիտեի՞ք կամավոր սկզբունքներով ծառայության մասին:

Ոչ, չգիտեի: Գիտեի, որ որդիս տասնութ տարեկան է, և պետք է գնա ծառայելու:

Եվ ոչ ոք չասա՞ց:

Ոչ: Այ վերջերս ես լսել եմ, որ կան նման իրավունքներ...բայց մենք գյուղում մի հարևանուհի ունենք, նրա որդին նույնպես պետք է գնա բանակ ծառայելու: Նա էլ հենց ասաց այն իրավունքների մասին, որ փախստականները պարտավոր չեն ծառայել: Իմ երկու որդիներն արդեն ավարտել են ծառայությունը, այնպես որ... Բայց քանի որ արդեն ծառայել են: Եթե ոչ իմ երեխաները, ապա ինչ-որ ուրիշ մեկը պետք է ծառայեր: Ինչ արած, ծառայություն է: Ինչպես միշտ, ծանուցումով կանչեցին բժշկական քննության, նորմալ տարան, երկուսն էլ նորմալ ծառայել են, ողջ և առողջ են, վերադարձել են:

Ձինծառայության տարիները, ե՞րբ են զորակոչվել:

1999 թ. ապրիլի 22-ին: Բանակից զորացրվել են 2001թ. հունիս ամսին: Փոքրս, որ վերջերս է վերադարձել, ասում է. «Եթե նույնիսկ փախստականը ծառայելուն իրավունք չունենար, ես միևնույն է կամավոր կգնայի: Եթե տղա ես, պետք է ծառայես»:

Ընդհանրացնելով նյութերը, որոնցում խոսվում էր այն մասին, որ փախստականները գնում էին ծառայելու ՀՀ Ջինված ուժերում անկախ նրանից, թե արդյոք գիտեին իրենց իրավունքների մասին, թե ոչ՝ տվյալ դեպքերում կարելի է խոսել թե՛ հենց զորակոչիկների և թե՛ նրանց ծնողների կայացրած որոշումների հետևյալ դրդապատճառների մասին՝ «բանակում ծառայելը տղամարդու գործ է, և յուրաքանչյուր երիտասարդի անհրաժեշտ է անցնել տղամարդու այդ դպրոցը»:

Հետևյալ երկրորդ դասում ընգրկվել են այն զորակոչիկները, որոնք **իրագեկ էին իրենց իրավունքներին:** Այս դեպքերի խորն ու մանրագնին ուսումնասիրությունը թույլ տվեցին հետազոտվող տվյալներում վեր հանել օրինաչափություններն ու շեղումները և հայտնաբերել թե՛ զորակոչիկների ու նրանց ընտանիքների, և թե՛ զինկոմիսարիատների և այլ ամնչվող ատյանների աշխատողների վարքի ընդհանուր բովանդակությունն ու օրինակները:

Կարելի է հստակ ասել, որ զինվորականների վարքը կանխորոշում է զորակոչիկ-փախստականների և նրանց ընտանիքի անդամների վարքի բազմաթիվ գործոնները: Հայտնի է միայն մեկ դեպք, երբ զինկոմիսարիատի աշխատակիցը նախօրոք փախստական-զորակոչիկի հորը տեղեկացրել է ՀՀ Ջինված ուժերում չծառայելու կամ կամավոր ծառայելու՝ փախստականների իրավունքին: Ստորև

ներկայացված է Վարդենիսի շրջանի Քախակն գյուղից Սուրեն Վերոյանի հայր Սևան Վերոյանի հետ զրույցից մի հատված՝

Սևան, Սուրենը քո ո՞րերորդ որդին է:

Երկրորդ որդին:

Իսկ փոքրին ե՞րբ են տարել բանակ:

2001թ. նոյեմբերին:

Ո՞վ ասաց Ձեզ այդ իրավունքների մասին:

Սաֆարյան Արաիկ:

Այսինքն՝ զինկոմիսարիատի աշխատողները Ձեզ տեղեկացրել են, որ փախստականն իրավունք ունի կամավոր հիմունքներով ծառայելու, և Ղուք Ձեր որդուն բանա՞կ եք ուղարկել:

Այո:

Փաստորեն նրանք տեղեկացրել է՞ն Ձեզ:

Այո:

Մինչ այդ Ղուք դրա մասին չգիտեիք:

Ոչ, մինչ այդ չգիտեինք:

Ո՞ր տարում:

2000թ. նոյեմբերին:

2000թ. նոյեմբերին Ձեզ ասացին, որ կարող եք Ձեր որդուն բանակ ուղարկել կամավոր հիմունքներով, իսկ դիմում գրե՞լ եք:

Այո, ինքս ստորագրել եմ դիմումը, ինքս եմ բանակ ուղարկել որդուս:

Ձեզ ստիպե՞լ են, թե Ղուք ինքներդ եք գրել:

Ես եմ գրել, և ստիպել, որ որդուս գնալ:

Կարող էիք և չուղարկել...

Երկուսը ծառայել էին, մտածեցի, թող սա էլ ծառայի, որ դեբիլ չդառնա:

Վերոնշյալ դեպքը կարելի է յուրօրինակ և միակը համարել, քանի որ ուսումնասիրված դեպքերից ոչ մեկում նույնիսկ փոքրիկ ակնարկ չկա այն մասին, որ պաշտոնական ու զինվորական իշխանությունների ներկայացուցիչներն իրենց նախաձեռնությամբ տեղեկացրած լինեն փախստականներին օրենքի համապատասխան դրույթին: Առաջ անցնելով ասենք, որ Պաշտպանության նախարարության աշխատակիցները մեր կազմակերպության ներկայացուցչի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ միանշանակ հայտարարել են, թե փախստական զորակոչիկներին իրազեկել են իրենց իրավունքների շուրջ, ինչը մենք վիճելի փաստ ենք համարում:

Եթե բացառենք հետազոտված այն դեպքերը, երբ ՀՀ բանակում փախստականները կամավոր ծառայություն են անցել՝ իրազեկ լինելով կամ չլինելով Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերում փախստականների ծառայությանն առնչվող օրենսդրական նորմերին, մնացած բոլոր դեպքերում փախստականների նկատմամբ կիրառվել է ուժեղ ճնշում ինչպես զինկոմիսարիատների, այնպես էլ կոկրետ դեպքերում գործին ներքաշված տեղական վարչակարգի կողմից:

Նման ճնշման արդյունքում զորակոչիկ փախստականներին մնում էր դրսևորել վարքի երկու հնարավոր մոդել՝ ստեղծված խնդիրը լուծելու համար:

1. պարտադրված ծառայություն ՀՀ Ջինված ուժերում

2. հոգեբանական ընդդիմություն զինկոմիսարիատների աշխատակիցների նկատմամբ:

Հարցաթերթիկներում ամփոփված տվյալների համաձայն երկրորդ դասի քսանութ հարցվողներից տասներեքը փորձել են պաշպանել իրենց իրավունքները և գրավոր դիմել են Պաշտպանության նախարարություն, Գլխավոր շտաբ, Զինվորական դատախազություն: Յոթ հոգի բողոք դիմում են գրել Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ: Հավաքված նյութերից հետևում է, որ այն փախստականները, որոնք չեն կարողացել օգտվել իրենց իրավունքից, հետագայում տեղեկացրել են իրենց հարևաններին և հարազատներին՝ օգնելով վերջիններիս կողմնորոշվել նույնական իրավիճակներում:

Ահա երկու օրինակ՝

Պեպր 1. Ցապովյան Սուրեն, Վարդենիսի ենթամարզ, գյուղ Կախակն:

Պատմությունը կազմվել է 1) Սուրենի համազյուղացու, 2) ընկերոջ հոր և 3) հենց Սուրենի հետ հարցազրույցի հիման վրա՝

Հայրը հեռացել է տանից, բայց չի ապահարզանվել մոր հետ, այնուհետև մահացել է: Նրանք չունեն ոչ տուն ոչ էլ հողամաս: Մայրը երկրորդ կարգի հաշմանդամ է, իսկ եղբայրը երրորդ: Առաջին ծանուցումը եկել է 2001թ. ապրիլին: Նա զինկոմիսարիակտ չի գնացել: Երկրորդ ծանուցումը եկել է 2001թ. հունիսի 15-ին՝ առ այն, որ նա պետք է բանակում ծառայության անցնելու նպատակով 17-ին ներկայանա զինկոմիսարիատ: Սուրենը զինկոմիսարիատ է գնացել հունիսի 15-ին և հրաժարվել ծառայելուց: Սկզբում նա ստիպված էր ապացուցել, որ ինքը չծառայելու իրավունք ունի, քանի որ ընտանքում հաշմանդամներ կան, իսկ ինքը միակ աշխատունակն է, ու եթե բանակ գնա, ապա մյուսներին պահող չկա: Նա նաև վախենում էր, որ հոգեկան հիվանդությամբ տառապող հաշմանդամ եղբայրը, որը հիվանդության պոռթկումների պահին ծեծում էր մորը, կարող էր նրան սպանել: Այդ ժամանակ պահանջեցին նրա հոր մահը վկայող փաստաթուղթ, որը նա ներկայացնել չէր կարող, քանի որ չգիտեր, թե ոչ պաշտոնական բաժանումից հետո որտեղ է գտնվել հայրն ու որտեղ մահացել: Փաստաթղթերը, Սուրենի և նրա մոր անձնագրերը զինկոմիսարիատում հետ չէին վերադարձնում՝ ասելով, թե «մինչև չծառայես, չենք վերադարձնի»: Հարևաններն ու ընկերոջ հայրն օգնում էին Սուրենին պաշտպանել իր փախստականի իրավունքները: Նրանց պնդմամբ, Վարդենիսի զինկոմիսարիատի զորակոչի բաժնի պետը նրանց տվեց կարդալու մի փաստաթուղթ, որտեղ գրված էր, որ փախստականը կարող է ծառայել կամավոր հիմունքներով, չնայած որ մինչև այդ զինկոմիսարիատի աշխատակիցներն ապացուցում էին, թե Սուրենին խաբում են, և որ իբրև թե նման օրենք գոյություն չունի: Բայց մինչև ծանուցում ստանալը Սուրենն արդեն իրազեկ էր չծառայելու իր իրավունքին նաև այն պատճառով, որ երկու օր դրանից առաջ եղել էր Երևանում ու մեկ այլ փախստականի հետ խոսակցության ընթացքում պատահաբար իմացել էր այդ մասին: Մի ամբողջ ամիս նա ստիպված էր իր սեփական միջոցների հաշվին գնալ ու գալ զինկոմիսարիատ ու ապացուցել, որ ինքը չծառայելու իրավունք ունի արդեն որպես փախստական: Սուրենը որոշեց մինչև վերջ պաշտպանել իր իրավունքները, քանի որ հստակ գիտեր, որ փախստականները պարտավոր չեն

բանակում ծառայել: Նա ինքը մտավ զինկոմիսարիատ ու պահանջեց վերադարձնել իր փաստաթղթերը: Նրանց տուն գալիս էին զինկոմիսարիատից, գյուղխորհրդից, ճնշում էին գործադրում, բղավում էին նրա վրա, բայց Սուրենը հաղթեց: Ջինկոմը նրան ասաց. «Ուզում էի խաբել, բայց չկարողացա»: Դրանից հետո Ջինկոմիսարիատի աշխատողները նրան ասացին, որ եթե ինքը օրինակ ցանկություն ունի գնալ Ռուսաստան, ապա պարտավոր է քաղաքացիություն ընդունել, նոր անձնագիր հանել ու գնալ: Բայց սկզբում պետք է ծառայություն անցնի: «Ծառայությունը տղայի համար է», - ասացին նրանք: Դրան Սուրենը պատասխանեց, թե այո, բայց իր ընտանիքն իր համար ավելի կարևոր է, ու ինքը քաղաքացիություն ստանալ չի ուզում: Վախենալով, թե նոյեմբերին կրկին ծանուցում կուղարկեն իրեն՝ նա Ջինկոմիսարիատին առաջարկեց արդեն դիմում գրել բանակում կամավոր հիմունքներով ծառայել չցանկանալու մասին: Բայց զինկոմիսարիատում այդ հարցը չլուծված թողեցին:

Պեպր 2. Ջալյան Վանյա Էդուարդի, ծնված՝ 1984թ., հոր գրառումներից՝ 2000թ., երբ իմ որդին՝ Ջալյան Վանյան սովորում էր թիվ 67 դպրոցի իններորդ դասարանում, նրան կանչեցին կենտրոնական Ջինկոմիսարիատ՝ հաշվառման վերցնելու նպատակով: Սակայն դրա հետ միասին ծանուցեցին, որ նա ներկայանա զորակոչման կետ 2002թ.: Սա էլ ինձ դրդեց գրել բոլոր ատյաններին: «Փախստականների մասին» օրենքի 18-րդ հոդվածին ծանոթանալուց հետո ես արդեն գիտեի, որ փախստականն ունի կամավոր հիմունքներով ծառայություն անցնելու իրավունք:

Գրեցի Շրջանային դատախազություն, Նախագահի աշխատակազմ, ՀՀ Նախագահի զինվորական խորհրդականին և ՀՀ Պաշտպանության նախարարություն: Շատ տանջանքներից ու տառապանքներից հետո ես վերջապես պատասխան ստացա Հանրապետական Ջինկոմիսարիատից, որում ասվում էր, որ փախստականներն ունեն բանակում ծառայելու կամ չծառայելու ընտրություն: Միայն դրանից հետո որդուս Ջինկոմիսարիատում հանեցին հաշվառումից: Հիմա իմ փախստական որդին արդեն 17 տարեկան է: Կստանա՞ր որդյոք նոր ծանուցում 2002թ., երբ կլրանա նրա 18 տարին և կլինի զորակոչման տարիքի, ես չգիտեմ:

Այս պատմությունը մեկնաբանելիս կարելի է ասել, որ դեռ դպրոցական տարիներին հաշվառումը արդեն իսկ հոգեբանական ներգործության մեթոդ է, և Ջալյան Վանյայի հոր ժամանակին հակազդումը ընդամենը ինչ-որ ժամանակով երկարաձգել է զինկոմիսարիատների հաջորդ քայլը՝ զինծառայություն անցնելու մասին ծանուցում ուղարկելը:

**Ջրույցներ համապատասխան պաշտոնական կառույցների հետ.
պաշտոնատար անձանց դիրքորոշումները**

ա) Ջինվորական Ղատախազություն

Պատասխանել է Ջինդատախազի օգնական Սերգեյ Պողոսյանը

1. Արդյոք վերջին երեք տարիներին, հատկապես երեք ամիսներին, Ձեզ անօրինական զորակոչի հարցերով դիմե՞լ են զինապարտության տարիքը բոլորած փախստականները կամ նրանց ծնողները:

Պատասխան՝ Անցյալ տարիներին շատ բողոքներ են եղել, սակայն եթե ուշադրությունը կենտրոնացնենք Ձեր մատնանշած տարիներին, ապա պատկերը հետևյալն է՝

1999 թ. Հայաստանի բնակչությունից ընդհանուր առմամբ մեզ է հասել 1300 բողոք, սակայն մեզ մոտ չի նշվել, թե դրանց ո՞ր մասն է փախստական գորակոչիկներից:

2000 թ. մեզ հասած 800 բողոքներից 19-ը փախստականներից է:

2001 թ. փախստականներից բողոքներ չկան (մեկ բողոք քննարկման փուլում է):

2. Հարուցվել են արդյոք քրեական գործեր զինկոմիսարիատների աշխատակիցների նկատմամբ, կամ ենթարկվել են նրանք արդյոք վարչական պատիժների օրենքի նման ոտնահարումների համար: *Ինչպե՞ս են հետաքննվել նման գործերը կամ դրանց վերաբերյալ որոշումներ կայացվել (արդյո՞ք ստեղծվել է հանձնաժողով, դիմել՞ եք Դուք զինկոմիսարիատներ և կարգադրել զինկոմներին թույլ չտալ անթույլատրելի և անօրինական գործողություններ կամ փախստականին փաստաթուղթ տրամադրելու):*

Պատասխան՝ Բողոքներին Ձինվորական դատախազությունը միշտ արձագանքել է: Հարուցված քրեական գործերի վերաբերյալ պարզապես կայացվել են համապատասխան որոշումներ: Ձինկոմիսարիատների աշխատակիցները վարչական պատժի չեն ենթարկվել: Սակայն «Փախստականների մասին» օրենքի ընդունումից հետո բոլոր զինկոմիսարիատները կարգադրություն են ստացել փախստականներին բանակ չկանչելու վերաբերյալ:

Ձինվորական դատախազությունը վերահսկող օրգան է: Մենք աշխատում ենք «Դատախազության մասին» օրենքի շրջանակներում: Աշխատում ենք բողոքների միջոցով, հիմնականում ոչ թե զինակոչիկների, այլ նրանց հետ, ովքեր արդեն ծառայում են: Նախքան գորակոչվելը փախստականների հարցերով զբաղվում է քաղաքացիական դատախազությունը:

3. Քանի՞ դեպք է եղել, երբ Ձինվորական դատախազության միջամտությունից հետո փախստականների իրավունքները վերականգնվել են, և նրանց ազատել են զինվորական ծառայությունից:

2000 թ. բոլոր 19 բողոքները քննարկվել են և բոլոր 19 փախստականները ազատվել են բանակային ծառայությունից:

4. Փախստականների գորակոչին առնչվող Ձեր աշխատանքում առաջնորդվել եք վերին ատյաններից գրավո՞ր թե բանավո՞ր կարգադրություններով:

Հստակ պատասխան չհետևեց:

5. Ունե՞ք արդյոք վերջին երեք տարվա ընթացքում բանակում փախստականների զոհվելու վերաբերյալ փաստեր կամ տվյալներ: Ես ուզում եմ ծանոթանալ նրանց գործերին:

Բանակում փախստականների զոհվելու վերաբերյալ մենք տվյալներ չունենք, իսկ ինչ վերաբերում է գործերի պատճեններին, որ Դուք խնդրում եք, ապա մենք Ձեզ դրանք կտրամադրենք:

6. *Գրանցվել են արդյոք Ձեզ մոտ փախստականներին դասալիքության համար պատասխանատվության ենթարկելու դեպքեր:*

Նման դեպքեր մեզ մոտ չեն եղել վերջին երեք տարիներին, քանի որ փախստականները համաձայն Փախստականների մասին օրենքի, զինծառայության պարտավորվածություն չունեն, հետևաբար և պատասխանատվություն չեն կրում ծառայությունից խուսափելու համար: Ինչ վերաբերում է դասալիքությանը, ապա այն փախստականները, որոնք բանակում ծառայում են կամովին և ինքնակամ հեռանում են բանակից, կրում են պատասխանատվություն, քանի որ արդեն երդում են տվել:

7. *Արդյոք բավականաչափ պա՞րզ է բանակում փախստականների ծառայելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, Ձեր կարծիքը:*

Սահմանադրության մեջ և «Զինապարտության մասին» օրենքում հստակ ասված է, որ բանակ են զորակոչվում ՀՀ քաղաքացիները, սակայն «Փախստականների մասին» օրենքում պարզություն չկա, այսինքն՝ ճշտում, դրա համար էլ զինվորական հիմնարկներում պաշտոնավարողները կարող են չհասկանալ կամ այլ, իրենց համար առավել շահեկան ձևով, ներկայացնել փախստականներին բանակ զորակոչելու դրույթը փախստականներին: Օրենքում անհրաժեշտ է պարզություն մտցնել: Արևմտյան երկրներից մեկի օրենսդրությանը ծանոթանալիս ես զարմացած մնացի, թե որքան մանրամասն և ճշգրտող պատասխաններ են տրված յուրաքանչյուր հարցին. ինչը գրեթե հարյուր էջանոց ծավալ ուներ: Մինչդեռ մեր օրինաստեղծները սահմանափակվում են մեկ կամ երկու նախադասությամբ և անկատար ձևակերպումներով:

Օրենքը չի լրացվում այլ ճշգրտող ակտերով, զորակոչի մեխանիզմներով:

5. *Փախստականներին բանակ զորակոչելու հետ կապված Ձեր դիրքորոշումը ո՞րն է:*

Պատասխան՝ Օրենքին հետևելը առաջին հերթին, և մենք բոլոր հարցերում առաջնորդվում ենք օրենքով:

Ս. Պողոսյանը, իսկ այնուհետև Զինվորական դատախազ Գ. Զհանգիրյանը փորձում էին մեզանից ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչու՞ փախստականները չեն ընդունում քաղաքացիություն, չէ՞ որ այդ դեպքում նրանք արդեն օրինական ձևով կարող են զորակոչվել բանակ (իրենք էլ պատասխանում էին իրենց հարցին, ասելով, որ փախստականները գտնվում են սոցիալական ահավոր կացության մեջ, չեն ուզում զրկվել իրենց կարգավիճակից, քանի որ ստանում են մարդասիրական օգնություն կամ իրենց կարգավիճակով ուզում են գնալ ուրիշ երկիր) ինչու՞ սեփական հող և անասուններ ստացած փախստականները բանակում ծառայելու պատասխանատվություն չեն զգում: Ո՞վ է պաշտպանելու երկիրը պատերազմի ժամանակ, և այլն:

Զինվորական դատախազության կողմից զինծառայությունից հետ կանչված վերոնշյալ 19 բողոք ներկայացրած զորակոչիկների ցուցակը, ինչպես նաև նրանց գործերի պատճենները մեզ տրամադրելու խնդրանքին դատախազության աշխատակիցները դրական պատասխանեցին:

2409 համարի պատասխանը, 4.12.2001 թ. ներկայացվել էր ԵԱՀԿ, և այնտեղ նշված է՝

...Համաձայն «Զինապարտության մասին ՀՀ օրենքի», զինվորական ծառայությունը միմիայն ՀՀ քաղաքացիների պարտքն է: Ադրբեջանից տեղահանված

փախստականների գերակշիռ մեծամասնությունը հայեր են, հետևաբար որոշ դեպքերում նրանք գրավոր դիմումներով խնդրում են իրենց կամավոր հիմունքներով ծառայության զորակոչել:

Զինվորական դատախազություն ուղղված՝ փախստականների բողոքները հարկադիր զորակոչի մասին մեր կողմից ուսումնասիրվել են, օրենքի խախտման արդյունքում զորակոչված փախստականներն ազատվել են զինծառայությունը շարունակելուց:

Նկատի առնելով, որ նամակում նշված ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են տվյալներ՝ կապված փախստականներին բանակ զորակոչելու հետ, ներկայացնում ենք Զինվորական դատախազություն 1999-2001 թթ. ներկայացված դիմում-բողոքների ցուցակը:

- 1999 թ. – Բողոքներ չկան
- 2000 թ. – 19 բողոք (կից ներկայացնում ենք ցուցակը մեկ էջով)
- 2001 թ. – դեկտեմբերի մեկի դրությամբ բողոքներ չկան

ՑՈՒՑԱԿ

Համաձայն ցուցակի բողոքածներից 19-ը ազատվել են ծառայությունից

6 – Մասիսից

8 – Երևանից (Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի, Շենգավիթ, Նոր Նորք) 4 –

Կոտայքից (ք. Աբովյան և երեք գյուղ)

1 – Հասցե չկա (այդպես է նշված ցուցակում)

Մեր մեկնաբանությունը

1. Ինչպես երևում է զրույցից, Զինվորական դատախազության ներկայացուցիչների մոտ միանշանակ նկատվում է փախստականներին բանակ զորակոչելու հարցի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունք, որի համաձայն Ադրբեջանի և տեղի բնակչության էթնիկ կապը արդեն ինքնին փախստականներին պարտավորեցնում է ծառայություն անցնել ՀՀ Զինված Ուժերում: Շարքային փախստականների նկատմամբ նման դիրքորոշումը կարող է համարվել հոգեբանական ներգործության գործոն:

2. Քանի որ բողոքների աշխարհագրությունն ընդգրկում է ընդամենը երեք շրջան (մայրաքաղաքն ու երկու մերձավորները), պարզ է դառնում, որ նշված երեք շրջաններում առավել իրազեկ են փախստականների իրավունքներին հեռավոր շրջանների համեմատությամբ, և մայրաքաղաքին մոտիկությունն օգնում է ժամանակին ներկայացնել բողոքն ու հետևել գործի քննության ընթացքին: Սակայն դա չի նշանակում, որ Հայաստանի մյուս շրջաններում բողոքներ չկան: Կրկին մատնանշենք պատճառները՝ շրջանների հեռավորությունը, իրավունքների մասին տեղեկատվության բացակայությունը, փախստականների ցածր ակտիվությունն ու թույլ հասարակական հատվածը:

3. Զինվորական դատախազության նամակին իրավաբանի տված մեկնաբանությունը՝

Պատասխանը հստակ չէ, մեզ միայն մնում է եզրակացնել, որ բոլոր 19-ին էլ ազատել են:

**բ) Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր
միգրացիայի և փախստականների վարչություն**
Պատասխանում էր վարչության պետ Գագիկ Եգանյանը

1. Արդյոք վերջին երեք տարիներին, հատկապես երեք ամիսներին, Ձեզ անօրինական զորակոչի հարցերով դիմե՞լ են զինապարտության տարիքը բոլորած փախստականները կամ նրանց ծնողները:

Պատասխան՝ Այդ տարիներին մեզ է հասել 15000 բողոք, սակայն թե դրանցից քանիսն են վերաբերում զորակոչին, ես չեմ կարող ասել, քանի որ զորակոչի վերաբերյալ բողոքները մեզ մոտ չեն ֆիքսվում: Ջորակոչիկների և նրանց ծնողների բողոքների վիճակագրություն մեզ մոտ չկա:

2. Ի՞նչ միջոցառումներ եք ձեռնարկել կապված բողոքների հետ: Արդյոք ինքներդ դիմե՞լ եք համապատասխան ատյաններ բացատրություն ստանալու նպատակով:

Պատասխան՝ Խախտումների թիվը պակասել է 1999թ. մարտ ամսից սկսած, այսինքն՝ «Փախստականների մասին» օրենքի ընդունման հետ: Առաջընթաց կա: Վերջին կես տարվա ընթացքում ոչ մի բողոք չի եղել: Եթե փախստականները մեզ դիմում են, ապա մենք միջամտում ենք: Բայց պետք է ասեմ, որ օրենքի կատարմանը հետևելու պարտականությունը Ջինվորական դատախազությանն է, և ոչ թե մերը: Երբ տվյալ հարցի կապակցությամբ փախստականները դիմում են մեզ, մենք նրանց նամակ ենք տալիս, որտեղ նշվում է, որ փախստականը պարտավոր չէ ծառայել ՀՀ Ջինված ուժերում համաձայն «Փախստականների մասին» օրենքի, սակայն կարող է ծառայել կամավոր դիմումի հիման վրա:

3. Ձեզ վստահված վարչությունը նշված գործելակերպի արմատախիլ անելու նպատակով որևէ գործողություններ նախաձեռնե՞լ է:

Պատասխան՝ Ես նպատակաուղղված այդ հարցին էի հրավիրում Կառավարության ուշադրությունը, և հասա նրան, որ Կառավարության վարչակազմի նախագահի կողմից ընդունվեց արձանագրություն տեղեկանքների հաստատման ժամանակ փախստականներից չպահանջել զինկոմիսարիատներում հաշվառման լինելու մասին փաստաթուղթ:

4. «Փախստականների մասին» օրենքում գրված է ՀՀ Ջինված ուժերում փախստականների ծառայլու իրավունքի մասին, բայց ոչինչ չի ասվում նշված հարցի հետ կապված պատասխանատվության մասին, ինչը բավականին անպարզություն է մտցնում պաշտոնյաների միջին օղակի և փախստականների համար, որոնք հանրապետության հեռավոր շրջաններում բնակվելով չեն կարողանում հասկանալ տվյալ հարցը և իրավաբանական սպառիչ խորհրդատվություն ստանալ: Մեր փորձնական հետազոտությունների, ինչպես նաև երիտասարդ փախստականների ու նրանց ծնողների հարցման ժամանակ մենք բախվեցինք թե՛ զորակոչի և թե՛ քաղաքացիության ընդունման հետ կապված՝ փախստականների անիրազեկության ինչպես առանձին, այնպես էլ զանգվածային փաստերի: Մենք բախվեցինք հարկադիր զորակոչի փաստերի, որոնք ընթացել էին ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման ներգործության պայմաններում: Բախվեցինք քաղաքացիություն ընդունելու հետ կապված փախստականների նկատմամբ ճնշում գործադրելու փաստերին, երբ մարդիկ մեզ են դիմում

բողոքներով, թե իրենց չեն տալիս տեղեկանքներ, թռչակ, հումանիտար օգնություն, և այլն, մինչև չընդունեն քաղաքացիություն: Երկու դեպքում էլ ոտնահարվում են փախստականների իրավունքները: Ի՞նչ եք կարծում, անհրաժեշտ չե՞ն արդյոք պարտականությունների մասին օրենքին կից լրացումներ և ճշգրտումներ, որոնց բացակայությունը գործնականում հանգեցնում է նման երևույթներին:

Պատասխան՝ Օրենքը փոփոխելու կարիք չկա, այն շատ լավ ու պարզ է գրված: Իսկ զորակոչի կամ քաղաքացիության ընդունման հետ կապված ճնշում չկա: Փախստականները բավականին լավ գիտեն իրենց իրավունքների մասին: Դուք ինքներդ եք հորինել, որ ճնշումներ կան կապված քաղաքացիության ընդունման հետ, որ նրանց թռչակ չեն տալիս: Դուք պարզապես չգիտեք, որ գյուղերում թռչակը տալիս է ոչ թե համայնքի ներկայացուցիչը, այլ սոցիալական ապահովման աշխատակիցը, իսկ նրա համար միևնույն է, թե ով է թռչակ ստանում: Ասեք ինձ փաստեր, մարդկանց ազգանուններ, որոնք թռչակը չեն տալիս, և ես իսկույն նրանց կազատեմ աշխատանքից: Բայց ասեք, ինչու՞ փախստականները չեն ընդունում քաղաքացիությունը, չե՞ն ուզում զրկվել արտոնություններից: Չէ՞ որ մենք միևնույն է չենք կարող բնակարանով ապահովել այդպիսի թվով փախստականների ընտանիքների: Անցել է տասներեք տարի, իսկ նրանք միևնույն է դեռ չեն ուզում քաղաքացիություն ընդունել, ուզում են Հայաստանից հեռանալ փախստականի կարգավիճակով: Աղբբեջանի փախստականները ազգությամբ հայեր են, նրանց պետությունը սեփական հող ու անասուններ է տվել, իսկ նրանք չեն ուզում ծառայել բանակում, իսկ եթե հանկարծ պատերազմ սկսվի՞:

Եվ ընդհանրապես, Հայաստանում փախստականների խնդիրը մարում է:

5. Ո՞րն է փախստականներին բանակ զորակոչելու խնդրի նկատմամբ Ձեր վերջնական դիրքորոշումը:

Պատասխան՝ Օրենքին անհրաժեշտ է հետևել:

Մեր մեկնաբանությունները

1. Գագիկ Եզանյանի վերջին երկու արտահայտությունները մեկնաբանության կարիք չունեն: Տեղին կլինե՞ր օրինակ բերել հենց նույն վարչությունում մշակված 55 միլիոն ԱՄՆ դոլլար արժեցող ծրագիրը փախստականների իրենց գլխին մշտական տանիք չունեցող 13000 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու վերաբերյալ:

2. Կառավարության արձանագրային որոշումը թույլ տվեց զինապարտության տարիքը բոլորած կամ ավելի մեծ տարիքի փախստականներին, որոնք ՀՀ զինապարտ չեն, անհրաժեշտ փաստաթղթեր ստանալիս (փախստականի վկայական, երթևեկության փաստաթղթեր, գրանցում) Հայաստանի Հանրապետության Ներքին գործոց նախարարության անձնագրային բաժիններում խուսափել զինկոմիսարիատներում հաշվառման կանգնելուց ու ՀՀ Զինված ուժերում ծառայելու համար զորակոչվելու հավանական սպառնալիքից :

3. Ինչ վերաբերում է չորրորդ հարցին, որի կապակցությամբ Եզանյանը հերքում է մեր կարծիքը, որը հիմնված է փախստականների այն պատմությունների վրա, որոնց համաձայն թռչակի վճարումը և այլն օգտագործվում են իբրև քաղաքացիություն ընդունելու (և այնուհետև ծառայելու) հարկադրանք, և առաջարկում է տալ մարդկանց ազգանուններ, որպեսզի նրանց ազատի աշխատանքից իբրև

օրինազանցների (չնայած որ այլ ատյանների աշխատողներին աշխատանքից ազատելը նրա լիազորությունների մեջ չի մտնում), ապա ակնհայտ է դառնում, որ զորակոչի մեր հետազոտած հարցերում մասնավորապես գոյություն ունի վարչակարգի շղթայական կապը, **երբ իշխանության մեկ օղակը մյուսն օգտագործում է իր խնդիրների իրականացման նպատակով:**

գ) ՀՀ Պաշտպանության նախարարություն

Պատասխանում էր ՀՀ Պաշտպանության նախարարության Իրավաբանական վարչության պետ Սեդրակ Սեդրակյանը

1. Արդյոք վերջին երեք տարիներին, հատկապես երեք ամիսներին, Ձեզ անօրինական զորակոչի հարցերով դիմե՞լ են զինապարտության տարիքը բոլորած փախստականները կամ նրանց ծնողները:

Պատասխան՝ Այո, բողոքներ եղել են: Սակայն մեզ մոտ դրանք առանձին չեն ֆիքսվում, դրա համար էլ չեն կարող ասել, թե քանի բողոք է եղել:

«Զինապարտության մասին» օրենքում սահմանված է ատյաններում որոշումների բողոքարկման նորմ՝ սկզբում զորակոչման հանձնաժողով, այնուհետև տեղական, մարզային և հանրապետական զինկոմիսարիատներ, իսկ վերջում դատարան:

2. Ինչպե՞ս եք վերաբերում նրան, որ «Փախստականների մասին» օրենքի ընդունումից հետո փախստականներն արդեն օրենսդրորեն պարտավոր չեն ծառայել բանակում:

Պատասխան՝ 1999թ. գարնանից մեր նախարարությունը շատ լուրջ վերաբերմունք է դրսևորում փախստականներին բանակ զորակոչելու խնդրի նկատմամբ: Փախստականների հարցը շատ ցավոտ է: Գոյություն ունի երկու խնդիր՝ մի կողմից փախստականներն ունեն Հայաստանում մշտական գրանցում, օգտվում են արտոնություններից և այլն, իսկ մյուս կողմից՝ չեն ուզում ծառայել: Արդյոք դա ճիշտ մոտեցում է: Չէ՞ որ մենք համենայն դեպս պաշտպանում ենք պետության շահերը: 1999թ. շատ բողոքներ եղան փախստականներից, քանի որ մենք փոխեցինք մեր քաղաքականությունը: Ներկայում փախստականներն արդեն երկու տարի է, ինչ ՀՀ բանակ չեն զորակոչվում, սակայն կան կամավորներ:

3. Մենք գիտենք, որ զինապարտության տարիքի փախստականները, որոնք չեն ծառայել բանակում և գտնվում են Հայաստանի տարածքից դուրս, հետապնդման մեջ են: Զինվորական ոստիկանության և զինկոմիսարիատների ներկայացուցիչները ընդունում են ինքնաթիռները և ցուցակների համաձայն առանձնացնում հետապնդման մեջ գտնվողներին: Իսկ փախստականների հետ ներկայում ինչպե՞ս են աշխատում:

Պատասխան՝ 1999թ. աշնանից Հայաստանից դուրս գտնվող փախստական զինապարտները հանգիստ կարող են վերադառնալ Հայաստան, նրանք արդեն չեն հետապնդվում:

Մեզ մոտ վերջին երեք տարվա ընթացքում նման դեպքեր չեն գրանցվել, քանի որ փախստականները «Փախստականների մասին» օրենքի համաձայն, բանակում ծառայություն անցնելու պարտականություն չունեն, հետևաբար նաև պատասխանատվություն չեն կրում ծառայությունից խուսափելու համար: Ինչ

վերաբերում է դասալիքությանը, ապա այն փախստականները, որոնք բանակում են համաձայն իրենց դիմումի, պատասխանատվություն են կրում, քանի որ արդեն երդում են տվել:

4. *Դեռ դպրոցներում զինկոմիսարիատները իրականացնում են զինկոմիսարիատների գորակոչային կետերում հաշվառման, այսինքն թե՛ ՀՀ քաղաքացիներին և թե՛ փախստականներին հաշվառելու պրակտիկան: Ինչպե՞ս գնահատել դա: Չէ՞ որ եթե օրենսդրորեն փախստականը զինծառայության պատասխանատվություն չունի, ուրեմն նրան նաև չպետք է հաշվառման վերցնեն:*

Պատասխան՝ Հաշվառումը նրա համար է, որ իմանանք Հայաստանում զինապարտության տարիքի մարդկանց թիվը: Մենք իշխանության տեղական մարմինների հետ փոխադարձ կապվածություն ունենք: Տեղական իշխանությունները հիմնվում են դպրոցների, բշտների տվյալների վրա, հաշվառում են կատարում և մեզ են տրամադրում զորակոչիկների վերաբերյալ տեղեկություններն ըստ տարիների:

5. *Փախստականների գորակոչի հետ կապված Ձեր աշխատանքում Դուք առաջնորդվում եք Ձեզանից վեր կանգնած աստիճանների գրավո՞ր թե բանավոր կարգադրություններով:*

Պատասխան չտրվեց:

6. *Արդյոք բավարա՞ր պարզ է բանակում փախստականների ծառայությունը կանոնակարգող օրենսդրական դաշտը Հայաստանում: Պետք չէ՞ մշակել փախստականներին գորակոչելու մեխանիզմ: Ձեր կարծիքը:*

Պատասխան՝ Օրենքը պարզ է, այն փոփոխելու անհրաժեշտություն չկա: Մեխանիզմ կա. բանակում կամավոր հիմունքներով ծառայելու մասին դիմում գրելը:

7. *Փախստականներին բանակ գորակոչելու վերաբերյալ Ձեր վերջնական դիրքորոշումը:*

Պատասխան՝ Օրենքին հետևելը: Ճիշտ է, կան խախտումների առանձին դեպքեր, և մենք դրանցից ապահովագրված չենք, սակայն աշխատում ենք այն ուղղությամբ, որ բոլոր զինկոմիսարիատները պահպանեն տվյալ հարցում փախստականների նկատմամբ էթիկան:

8. *Կցանկանայի՞ք ինչ-որ բան առաջարկել փախստականների գորակոչի բարելավման նպատակով:*

Բոլոր փոփոխությունները պետք է կատարվեն հօգուտ փախստականների, որպես տուժածների: Նրանք չունեն կացարան, շատերն ընդհանրապես ոչինչ չունեն, այդ իմաստով մենք նրանցից տարբերվում ենք: Դրա համար պետք է այնպես անել, որ նրանք ինչ-որ օգուտ ստանան պետությունից:

Մեկնաբանություններ

1. Օրենքի կիրարկման տեսանկյունից, Պաշտպանության նախարարության ներկայացուցչի տված պատասխաններից մեկում ամփոփված տվյալները համապատասխանում են իրականությանը: Քանի որ հետազոտության ընթացքում փախստականներն ու նրանց ծնողներն օրինակներ էին բերում, երբ իրենց երեխաներին հետ էին վերադարձնում տուն, երբ վերջինները

զինկոմիսարիատներից գնում էին հանրապետական հավաքագրման կետեր առանց կամավոր հիմունքներով ծառայելու ցանկության մասին դիմումի առկայության: Սակայն նման փախստականը, որն արդեն գիտեր իր իրավունքները, ենթարկվում էր հոգեբանական ճնշման տեղական զինկոմիսարիատի և վարչակարգի կողմից:

2. Նույն իրավիճակն է Ջինվորական դատախազության հետ: Անհրաժեշտ է նշել, որ փախստականների էթնիկ պատկանելիության հարցերում Պաշտպանության նախարարության աշխատակիցների կարծիքը նույնական է Ջինվորական դատախազության կարծիքին: Ինչպես այնտեղ, այնպես էլ այստեղ արտահայտվում էր այն միտքը, թե պետությունը փախստականների համար արել է գործնականում շատ բան, և փախստականները պարզապես պարտավոր են ծառայել ՀՀ Ջինված ուժերում: Սակայն հավանաբար այդ պատասխանի մասին մոռացած պարոն Սեդրակյանը գրույցի ավարտին սենտիմենտալ արտահայտություն արեց այն զրկանքների և դժվարությունների մասին, որոնք հաղթահարում են Հայաստանի փախստականները: Սա ակնհայտորեն հակասում է պետական օժանդակության նշանակության մասին նրա կարծիքին, որը բնորոշում է փախստականներին բանակ զորակոչելու հարցերի նկատմամբ նրա անձնական դիրքորոշումը:

դ) Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ

Պատասխանում էր Այակի Իտոն, ՄԱԿ-ի ՓԳՀ իրավաբանական բաժնի ղեկավարը

1. Արդյոք վերջին երեք տարիներին, հատկապես երեք ամիսներին, ՄԱԿ-ի ՓԳՀ գրասենյակ անօրինական զորակոչի հարցերով դիմե՞լ են զինապարտության տարիքը բոլորած փախստականները կամ նրանց ծնողները:

Պատասխան՝ 2001թ. մեկ բողոք: Մնացած տարիներին հատուկեմտ բողոքներ են եղել: Չեն կարծում, որ ՄԱԿ-ի ՓԳՀ գրասենյակը հստակ ձևակերպում է ունեցել տվյալ խնդրի վերաբերյալ: Մենք միջամտում ենք առանձին դեպքերում: Սովորաբար նամակ ենք գրում փախստականների պաշտպանության նպատակով, բայց հիմնականում հիմնվում ենք հասարակական կազմակերպությունների և Ջինվորական դատախազության աշխատանքի վրա:

2. Մեր հարցման ընթացքում վեր են հանվել «Փախստականների մասին» օրենքի խստման դեպքեր կապված ՀՀ Ջինված ուժեր փախստականների զորակոչի հետ: Ձեր կարծիքը տվյալ հարցի կապակցությամբ: Որքանո՞վ պարզ է ՀՀ բանակ փախստականներին զորակոչելու վերաբերյալ օրենքի սահմանումը:

Պատասխան՝ Ես Հայաստան եմ եկել ոչ այնքան վաղուց, և այս հարցը դեռ մանրագնին չեմ ուսումնասիրել: Սա կարևոր հարց է: Կնշեմ, որ միջազգային օրենսդրության տեսանկյունից, հարցը պարզ չէ, միջազգային փաստաթղթերում չի լուսաբանվում: Ուսումնասիրենք Հայաստանի ներքին օրենսդրությունը: «Ջինապարտության մասին» օրենքի 3-րդ հոդվածում ասվում է, որ քաղաքացիների սահմանադրական պարտքն է մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

«Փախստականների մասին» օրենքի 18-րդ հոդվածում նշվում է, որ փախստականն ունի ՀՀ քաղաքացիություն ստանալու և Ջինված ուժերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայելու իրավունք: Սա խոսում է այն մասին, որ փախստականն իրավունք ունի ծառայելու բանակում միմիայն քաղաքացիությունն ընդունելուց հետո: Հոդվածի ձևակերպումից չի երևում, որ փախստականը չի կարող ծառայել առանց Հայաստանի Հանրապետությունում նատուրալացվելու: Պարտականությունների մասին օրենքում ոչինչ չի ասվում:

Քանի որ «Ջինապարտության մասին» օրենքի երրորդ հոդվածում հստակ մատնանշված է, որ բանակում ծառայությունը միմիայն ՀՀ քաղաքացիների պարտքն է, ապա իրավաբանության տեսանկյունից «Փախստականների մասին» օրենքի 18-րդ հոդվածում փախստականի ծառայության իրավունքի սահմանման մեջ չէր կարող օգտագործվել «պարտավոր է» եզրը:

Մեկնաբանություններ

Օրինակ բերելով «Փախստականների մասին» օրենքի 18-րդ հոդվածը, որում նշվում է այն մասին, որ նախադասության երկու մասը 1) «փախստականն իրավունք ունի ՀՀ քաղաքացիություն ստանալ և 2) ծառայել զինված ուժերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրար հետ են կապված և շաղկապով, և հստակ բացատրում են, որ միայն ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո է փախստականն իրավունք ձեռք բերում ծառայել ՀՀ Ջինված ուժերում պարոն Այակի Իտոն հենվում էր օրենքի անգլերեն թարգմանության վրա, որը գտնվում էր Հայաստանում ՄԱԿ-ի ՓԳՀ Գրասենյակի տնօրինության տակ, որտեղ նախադասության երկու մասերը միմյանց էին շաղկապված «և» շաղկապով:

«Փախստականների մասին» օրենքի 18 հոդվածի հայերեն և անգլերեն տեքստերի միջև տարբերությունները տվյալ հոդվածի մեկնաբանության համար կարևոր նշանակություն չունեն: «Ստորակետ/և»-ի առկայության կամ բացակայության դեպքում «Փախստականների մասին» օրենքը միևնույն է **իրավունք է** վերապահում փախստականներին ծառայել զինված ուժերում հիմք ընդունելով նրանց ցանկությունը օգտվել այդ իրավունքից: Այս հոդվածը չպետք է մեկնաբանվի/դիտվի իբրև **պարտավորություն**, քանի որ հոդվածի այս կետի տեքստում բացակայում է «պարտավոր է» բառը և առկա են «իրավունք ունի» բառերը:

ե) Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողով Մեր նամակին ի պատասխան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի նախագահ Պ. Հայրիկյանի պատասխանից հետևում է, որ նշված հարցով փախստականների հանձնաժողովին բողոքներ չեն ներկայացրել:

Մեկնաբանություններ

Հավանաբար փախստականները պարզապես իրազեկ չեն նշված կառույցի գոյությանը կամ այն չեն համարում իրենց իրավունքների պաշտպանության իրական

լծակ: Համենայն դեպս ծրագրի շրջանակներում հարցման ենթարկված 75-ից, որոնք տարբեր ատյանների բողոքներ են ներկայացրել, ոչ մեկը չնշեց այս հանձնաժողովը:

զ) Ձինկոմիսարիատներ

Մենք սկսեցինք զինկոմիսարիատներ այցելել Պաշտպանության նախարարության ներկայացուցչի հետ հանդիպումից և նրա կողմից զինկոմիսարիատներին մեզ ընդունելու մասին կարգադրությունից հետո: Պարզվեց, որ փախստականների անձնական գործերը միանգամայն կարգին վիճակում են:

Կոտայքի զինկոմիսարիատ՝ Ջորակոչի բաժնի պետ Սահակյան Խաչիկ՝

Նրա խոսքերով կամավոր հիմունքներով զինծառայություն անցնելու դիմում գրելու վրա ոչ մի ճնշում չի գործադրվել: Գրանցումն ու ծանուցումները բացատրում է միջոցների հաշվառման անհրաժեշտությամբ:

Կոտայքի մարզային զինկոմիսարիատում մեզ համար հաճելի անակընկալ էր հայտնաբերել, որ զինապարտության տարիքի հասած փախստականների և տեղի պատանիների գործերը միմյանցից տարբերակված են: Փախստականների 78 գործ (18-27 տարեկան), կազմին «փախստական» նշանով առանձին էին դրված քարտարանում. դրանցում ամփոփված էին փախստականի ծննդյան վկայականի պատճենը, երկու պարտադիր ձևի դիմում (գորակոչիկի և ծնողների դիմումները) ՀՀ Ձինկոմիսարիատում ուժերում ծառայելուց հրաժարվելու կամ ծառայության անցնելու ցանկության մասին:

Բացի այդ, իբրև նորամուծություն, զինապարտության տարիքի փախստականների ցուցակը ուղարկվում է Միգրացիայի և փախստականների վարչություն՝ վերջիններիս կարգավիճակում փոփոխությունները ճշտելու նպատակով: Ցուցակն առանձին ներկայացվում է Պաշտպանության նախարարություն, որպեսզի նշված անձանց պատասխանատվության չկանչեն ծառայությունից խուսափելու (դասալքության) պատճառով:

2001թ. գարնանային գորակոչի գործերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ գորակոչիկներից յոթը դիմում են գրել ՀՀ Ձինկոմիսարիատում կամավոր հիմունքներով ծառայության անցնելու մասին: Կից ներկայացված էին նաև ծնողների դիմումները: Նրա խոսքերով դպրոցում 16 տարեկան փախստականներին հաշվառման են վերցնում ըստ նրանց ցանկության:

Դիրքորոշումը՝ օրենքին պետք է հետևել

«Արդյոք կցանկանայի՞ք, որ փախստականները նույնպես ծառայեն բանակում» հարցին հետևեց «Այո, ցանկալի կլիներ» պատասխանը: Անհրաժեշտ է քարոզչություն անել: Անհրաժեշտ է մշակել փախստականներին գորակոչելու մեխանիզմ՝ ներմուծելով որոշակի արտոնություններ. Օրինակ՝ 35 կմ տրամագծով ծառայության դեպքում զինծառայողի ընտանքին էլեկտրաէներգիայի վարձավճարի կամ հարկային արտոնություններ տալ:

Մեկնաբանություններ

Փախստականների ցուցակը ներկայացված է Միգրացիայի և փախստականների վարչություն վերջինների կարգավիճակը ճշտելու նպատակով, 2001թ. նոյեմբերի 23-ին՝, այսինքն՝ զինկոմիսարիատներին ուղղակիորեն մեր այցելությունների մասին տեղեկացնելուց հետո, ավելի ճիշտ, Պաշտպանության նախարարությունից հանդիպման թույլտվություն ստանալուց երեք շաբաթ անց: Սա

խոսում է այն մասին, որ հնարավոր է փախստականների գորակոչի հարցի կարգավորում, եթե զինկոմիսարիատներում նշված իրավիճակի կանոնավոր վերահսկողություն սահմանվի կազմակերպությունների կողմից: Ինչ վերաբերում է Կոտայքի մարզում փախստականների հաշվառման մեխանիզմը փոփոխելուն (ըստ ցանկության), ապա դա ինչ ինչ պատճառներով հայտնի չէ Պաշտպանության նախարարությանը:

***Մարտունու զինկոմիսարիատ`
Զինկոմ Հարությունյան Ռուդիկ Գերասիմի***

Մարտունու շրջանում հիմնականում փախստականներ չեն բնակվում, և Երևանում անցկացված հարցման արդյունքում ի հայտ էր եկել Նազարյան Ներսեսի գործի հետ կապված խախտումները, որը գրանցված էր տվյալ շրջանում (տես` հարցումները): Մարտունու զինկոմիսարիատում, և արդեն զինկոմի սեղանին էին փախստականների երկու գործ:

Այն հարցին, թե ինչու` են փախստականները հաշվառման վերցվում, և ինչու` են կազմվում նրանց գործերը, հետևեց «Որպեսզի այն ժամանակ, երբ քաղաքացիություն ընդունի, գործն արդեն պատրաստ լինի, որպեսզի պատերազմի ժամանակ նրան բանակ տանեն» պատասխանը:

Փախստականների հաշվառումը, ինչպես նշեց նա, Պաշտպանության նախարարության բանավոր կարգադրության համաձայն էր կատարվում:

Ներսես Նազարյանի հարցի վերաբերյալ տրվեց հակիրճ բացատրություն համաձայն գործերում պահվող փաստաթղթերի: Նազարյան Ներսեսը գորակոչվել էր 1998թ. մայիսին ու ուղարկվել ծառայության: Էպիկրիզում գրված է, որ նա պիտանի է սահմանափակումներով ծառայության: Կանչել են ծանուցումով 1998թ. աշնանը, 1999թ. գարնանը, բայց նա չի հայտնվել: Որոշել են նրան քրեական պատասխանատվության ենթարկել, գործերը հանձնել են Զինվորական դատախազություն: Միայն 2000թ. է գործը փակվել, համաձայն նրա, որ Ներսեսը փախստական է: Զինվորական գրքույկը, որը ձևակերպվել էր նրա անունով ծառայության սկզբում ոչնչացվել է 06.06.1998 թ. քանի որ Նազարյանը միայն 15 օր է ծառայել: Զինկոմի խոսքերով Նազարյան Ներսեսին այլևս չեն կանչել ծառայելու և ոչ մի բռնի մեթոդ նրա նկատմամբ չեն կիրառել:

Ղիրքորոշումը` օրենքին անհրաժեշտ է հետևել:

Անհրաժեշտ է կատարելագործել օրենսդրությունը, որն առնչվում է տվյալ հարցին: Շնորհակալություն հայտնեց հարցազրուցավարին փախստականների իրավունքների վերաբերյալ գրականությունը տրամադրելու համար` ասելով, որ բացարձակ չկա նման գրականություն, որը բաժանվեր աշխատակիցների շրջանում, ինչպես նաև աշխատանքային նպատակով օգտագործելու տեղեկատվություն ունենալու համար:

Հաջորդ երկու շրջանները սահմանակից են Ադրբեջանին:

***Կրասնոսելսկի զինկոմիսարիատ`
Վերոյան Արմեն, գորակոչի բաժնի պետ***

Փախստականների գործերը այստեղ նույնպես առանձնացված էին մյուսներից: Կային կամավոր հիմունքներով ծառայության մասին դիմումներ թե` փախստականներից և թե` նրանց ծնողներից: Նրա խոսքերով կամավոր

հիմունքներով ծառայելու դիմումները գրելիս ոչ մի ճնշում չի գործադրվել: Հաշվառման են վերցնում ողջ բնակչությանը՝ ներառյալ փախստականներին: Զինկոմիսարիատում գրանցումը բոլոր միջոցների հաշվառումն է: Ինչպես նա բացատրեց, եթե մարդը նույնիսկ ժամանակավոր գտնվում է տվյալ տարածքում, ապա պետք է հաշվառվի:

Դիրքորոշումը՝ օրենքին անհրաժեշտ է հետևել:

Փախստականների ռեսուրսները պետք են: Պատերազմի ժամանակ ցանկացած մարդ, փախստական կամ քաղաքացի, առաջին հերթին պաշտպանելու է իր տունը, իր գյուղը: Դրա համար էլ անհրաժեշտ է օրենք, որպեսզի յուրաքանչյուրը ծառայի իր բնակավայրում: Ինչպես նաև այլ արտոնություններ (էլեկտրաէներգիա, հողի հարկ):

Մեկնաբանություններ

Վերոյան Արմենը՝ խոսելով թե՛ փախստականների և թե՛ քաղաքացիների ընդհանուր հաշվառման մասին՝ սխալվում էր, երբ որպես փախստականների զորակոչման հիմք մեջ էր բերում «Զինապարտության մասին օրենքը» և ԽՍՀՄ պաշտպանության նախարարի թիվ 280 հրամանը, 1987թ., որը մինչև մեր ժամանակները կիրառվում է իբրև հրահանգ:

| |
|---|
| «Զինապարտության մասին օրենք», հոդված 5 |
| 1. Զինվորական հաշվառումը նախագորակոչիկների (16-18 տարեկան), զորակոչիկների (18-27 տարեկան) և պահեստային քաղաքացիների հաշվառման պետական համակարգ է: |
| ԽՍՀՄ պաշտպանության նախարարի թիվ 280 հրամանը, 1987թ. |
| Հաշվառման են ենթակա միայն ԽՍՀՄ քաղաքացիները: Օտարերկյա քաղաքացիներն ու առանց քաղաքացիության անձինք հաշվառման ենթակա չեն: |

***Վարդենիսի զինկոմիսարիատ՝
Ձորակոչի բաժնի պետ Գասպարյան Հրայր***

2000թ. մայիսի զորակոչից հետո վերևից (նախարարությունից) ստացանք հրահանգ փախստականներին չզորակոչելու վերաբերյալ: Նրա խոսքերով, իրենք իրենց որոշումները փոխում են միմիայն կառավարության հրահանգով: Դրա հետ կապված որոշեցին փախստականներին չգրանցել այբբենական և արձանագրությունների գրքերում, այլ նրանց համար առանձին գիրք պատրաստել: 2002 թ. սպասվելիք նոր հաշվառման ժամանակ կսկսեն օգտագործել փախստականների համար նախատեսված առանձին գիրք:

2000 թ. կամավոր հիմունքներով զորակոչվել են տասներեք փախստականներ, իսկ տասնմեկը հայտարարել են, որ չեն ցանկանում ծառայել: Ներկայումս Վարդենիսի շրջանում ծառայություն են անցնում ընդամենը քսանվեց փախստականներ: Յուրաքանչյուրի գործում առկա է թե՛ նրանց և թե՛ ծնողների դիմումը:

Նրա խոսքերով, փախստականները, որոնք չեն ներկայացրել դիմումներ, այլևս բանակ չեն զորակոչվում, և նրանց թվում Ցապովյան Սուրենը (տես՝ հարցազրույցները):

Ճախստականների գրանցումը շարունակում են, քանի որ նրանց չեն հանում զորակոչի ռեսուրսների պլանը:

Առաջարկեց մեխանիզմներ, որպեսզի համայնքների նախագահներն իրենց տրամադրեն ցուցակները, ցուցակները ստուգվեն Փախստականների և

արտագաղթի վարչության կողմից, իսկ այնուհետև ներկայացվեն Պաշտպանության նախարարություն՝ զորակոչի ռեսուրսների պլանի նվազեցման նպատակով:

Դիրքորոշում՝ կա օրենք, և մենք պարտավոր ենք հարգել այն:

Փախստականներին իբրև ռեսուրս օգտագործելու նպատակով անհրաժեշտ է նրանց որոշակի արտոնություններ տրամադրել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ միջազգային համայնքը ուշադրությունը բևեռել է Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումներին և գործնականում իշխանության բոլոր օղակներում օրենքի իշխանությանը, այդ թվում նաև զինվորական ոլորտում, դիտվում են գոնե ձևականորեն առօրեկան հարցերում օրենքին հետևելու միտումներ: Նման կարգը փախստականներին բանակ զորակոչելու հստակ մեխանիզմի

բացակայության պարագային չի կարող լիովին իրավական հիմքով կանոնակարգել զորակոչի ընթացակարգն ու փախստական երիտասարդների զինվորական ծառայության իրական ընթացքը: Քանի որ հավանական է, որ մինչև 2008 թ. Ադրբեջանից տեղահանված փախստականներին զորակոչելու պրոբլեմը կարող է պահպանվել, օրենքի լրացումների մշակումը, զորակոչի հստակ մեխանիզմի ստեղծումն ու գործնականում նրա կիրառումը կօգնի ապագայում կարգավորել նշված գործընթացն ու խուսափել հարկադրական զորակոչի դեպքերից: Սակայն այս հետազոտության ընթացքում մեր կողմից վեր հանված այս խնդիրը առավել խորն ու հատուկ հետազոտության կարիք ունի:

Պետական կառուցվածքների ներկայացուցիչների հետ զրույցները հանգեցրին այն համոզմանը, որ սկսած 1999թ. մարտ ամսից, այսինքն «Փախստականների մասին» օրենքի ընդունման հետ, մինչև օրս գոյություն ունի խախտումների նվազեցման դինամիկա: Զորակոչիկ փախստականների անձնական գործերը կարգի են բերվում, նրանց առանձնացնում են շրջանի զորակոչիկների մեծ ցուցակից, զարգանում է զորակոչի պլանի նվազման պրակտիկան, երբ նախօրոք գրանցված ռեսուրսների համաձայն գործելուց առաջ նրանից հանում են զինապարտության տարիքի փախստականներին, ինչպես նաև բնակչության արտոնյալ այլ կատեգորիաներին:

Չնայած որ առաջ էին քաշվել կարծիքներ կապված նրա հետ, որ փախստականներին համեմայն դեպս պետք է բանակ տանել, քանի որ նրանք ամեն դեպքում երկրի բնակչությունն են ներկայացնում (10%) և այդ զգալի ռեսուրսն անհրաժեշտ է իր հայրենիքի պաշտպանության համար, բայց հիմնականում բոլորը, ում հետ զրույցներ էին անցկացվել, եկան ընդհանուր կարծիքի, որ իրենց բաժիններում արվում է ամեն ինչ նրա համար, որպեսզի Հայաստանի Հանրապետության օրենքները գործեն անբերի: Յուրաքանչյուրն իր աշխատանքային հատվածում հակազդում է խախտումներին ու մշակում նոր մեխանիզմներ Հայաստանում բնակչության բանակ զորակոչման հարցերում օրինականության հասնելու նպատակով:

Միաժամանակ առաջ էին քաշվում առաջարկություններ փախստականներին բանակ զորակոչվելու արտոնյալ մեխանիզմների մշակման վերաբերյալ: Օրինակ այն մասին, որ փախստականները կարող էին ծառայել իրենց բնակավայրից 35 կմ շառավղով, կամ որ ծառայության տարիներին նրանց ընտանիքները էլեկտրականության, հեռախոսի, հողի կամ այլ բաների համար վճարեն հիսուն տոկոսով ցածր գին: Այդ դեպքում փախստականների մոտ, որոնք հիմնականում (ՄԱԿ-ի վիճակագրության համաձայն) ապրում են 2,3 անգամ ավելի վատ Հայաստանի տեղական բնակչության մակարդակի համեմատությամբ, բանակում կամավոր ծառայելու շահագրգռություն կառաջանա:

Եզրակացություններ կոնկրետ խնդրի շուրջ

1. Այսպիսով, ինչպես «Փախստականների մասին» օրենքի ընդունումից առաջ, այնպես էլ նրանից հետո Հայաստանում, ճիշտ է արդեն ոչ այնքան մեծ մասշտաբներով, շարունակվում է փախստականներին հարկադիր բանակ զորակոչելու գործընթացը: Եվ «Փախստականների մասին» օրենքի ընդունումից հետո ծառայելու ցանկություն չունեցող փախստական զորակոչիկների և նրանց

- ծնողների վրա ներգործելու հիմնական մեթոդը, ինչպես ցույց են տալիս սույն հարցման արդյունքները, ուժեղ բարոյահոգեբանական ճնշումն է՝ տվյալ գործընթացին տեղական իշխանության այլ ճյուղերի ընդգրկման միջոցով:
2. Համապատասխան կառույցների հետ անցկացրած գրույցների արդյունքները նույնպես խոսում են այն մասին, որ չնայած փախստականներին բանակ զորակոչելու հարցերում ձևականությունների պարագային նրանք բոլորը ցուցադրաբար այն կարծիքին են, որ փախստականները, ինչպես հայեր պետք է ծառայեն բանակում:
 3. Կազմակերպությունում հավաքվել է ութ գործ ակնհայտ ամենաթողությունների փաստերով 1999-2001 թթ., որոնցում կան ՀՀ Ջինված ուժերում ծառայել չցանկացող փախստականների նկատմամբ ուժի գործադրման առանձին դեպքեր: Նշված երևույթը հետազոտված շրջաններում զանգվածային բնույթ չի կրում:
 4. Ծառայելուց հրաժարվող փախստականները ներկայում չեն ենթարկվում քրեական պատասխանատվության և չեն հետապնդվում օրենքով:
 5. Երկրի շրջաններ փախստականների իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն չի հասնում:
 6. Շրջաններում գրանցվել է գյուղի փախստականների՝ իրենց իրավունքների ինքնուրույն պաշտպանության իներտ վերաբերմունք, ինչից օգտվում են զինվորական պաշտոնյաները:
 7. Փախստականների գերակշիռ մասն անկախ իր իրավունքներին իրազեկ լինելուց համաձայնություն են տալիս կամավոր ծառայել բանակում, ավելին բանակում ծառայությունը համարում են իրենց համար բնական:
 8. Փախստականներին զորակոչի կետում գրանցելու պրակտիկայի շարունակումը բարոյահոգեբանական ճնշման առաջին քայլն է:
 9. Բոլոր չորս զինկոմիսարիատներում չկա փախստականների հարցերով զբաղվելու ընդհանուր մեկ մեխանիզմ:

Ընդհանրացնելով այս ամենը՝ կարելի է վստահ ասել, որ օրենքի ընդունումը արմատապես փոխել է իրավիճակը, և փախստականներին բանակային ծառայության կանչելու հստակ կարգ է նշմարվում: Կանոնավոր վերահսկողությունը հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային իրավապահպան կառույցների կողմից, աստիճանաբար Հայաստանի զինվորական իշխանություններին կստիպի լրիվ հետևել օրինականությանը և փախստականների հետ իրենց փոխհարաբերությունները կարգավորել միմիայն ՀՀ Սահմանադրության և օրենսդրության գոյություն ունեցող հոդվածների հիման վրա: